# 2014

Տարեկան Զեկույց

Annual Report




Մենք օգնում ենք Ձեր օգնությամբ

We help with Your help

ARCS
ARMENIAN RED CROSS SOCIETY

ՀԿԽԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային
շարժման հիմնարար սկզբունքները

Fundamental Principles of the Red Cross and
Red Crescent International Movement

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
HUMANITY

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
IMARTIALITY

ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ
NEUTRALITY

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
INDEPENDENCE

ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
VOLUNTARY SERVICE

ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ
UNITY

ՀԱՄԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ
UNIVERSALITY





Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը՝ մարդասիրության ոլորտում, շարունակում է իրագործել իր առաքելությունը Հայաստանում՝ նվազեցնելով ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվելով դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերելով անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

2014 թվականի ընթացքում մենք շարունակել ենք մեր գործունեությունը հետևյալ ուղղություններով՝ սոցիալական աջակցություն և առողջապահություն, աղետների կառավարում, բնակչության տեղաշարժ, առաջին օգնություն, Կարմիր խաչի սկզբունքների և մարդասիրական արժեքների տարածում, որոնում և ընտանեկան կապերի վերականգնում, երիտասարդական, միջազգային համագործակցություն: ՀԿԽԸ գործունեությունը և մատուցած ծառայությունները նպաստել են շահառուների և խոցելի համայնքների հոգսերի թեթևացմանն ու կայուն զարգացմանը: ՀԿԽԸ-ն չի դադարել միջոցներ փնտրել՝ իր գործողություններն ընդլայնելու և նրանց խնդիրներին արձագանքելու համար, և այս ուղղությամբ ջանքերը շարունակական են լինելու:

Այս տարեկան զեկույցում տեղ են գտել անցյալ տարվա ընթացքում իրականացված ամբողջ գործունեությունը, ձեռքբերումներն ու նվաճումները:

Armenian Red Cross Society, as an auxiliary organization to the Government in the humanitarian sphere, continues to fulfill its mission in Armenia which is to reduce the vulnerability of the population through mobilization of the power of humanity, to get prepared to cope with situations, which may cause vulnerability among the population, as well as by assisting people made vulnerable by harsh socio-economic conditions.

During the 2014 year we have continued our activities in the following main directions: Social Support and Health Care, Disaster Management, Population Movement, First Aid, Dissemination of Red Cross Fundamental Principles and Humanitarian Values, Tracing and Restoring Family Links, Youth and International Activities. ARCS activities and provided services contributed to the reduction of needs and sustainable development of the beneficiaries and vulnerable communities. ARCS has never stopped searching new ways to expand its operations and to respond to their problems, and these efforts will be continuous.

This annual report contains all the activities carried out during the past year, gains and achievements.

For Armenian Red Cross Society the primary objective has been the issue of support and integration of 13 000 Syrian Armenians

Հայկական Կարմիր խաչի ընկերության համար առաջնահերթ խնդիրներից է եղել Սիրիայի ճգնաժամի հետևանքով Հայաստան տեղափոխված 13 000 սիրիահայերի աջակցության և ինտեգրման հարցը, որոնց մեծ մասը մեր շահառուները դարձան:

Մեր գործունեությունը հիմնված է կամավորական ուժի և մարդասիրական ոգու վրա: Այս տարվա ընթացքում էլ մեր ձեռքբերումների և հաջողությունների համար պարտական ենք նաև մեր կամավորներին, որոնց ներգրավման, ուսուցման, ինչպես նաև կամավորության կարևորության վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ էլ մեծ աշխատանք է տարվել:

2014 թ. ՀԿԽԸ-ն իր գործունեության համար մեծ գնահատականի արժանացավ Մարդասիրության համաշխարհային օրը՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից ճանաչվելով «Մարդասիրության հերոս»:

Ամփոփելով մեր գործունեության ևս մեկ տարին, շնորհակալություն ենք հայտնում մեզ վստահողներին, մեզ հետ համագործակցող կազմակերպություններին ու անհատներին, բարերարներին ու կամավորներին: Մեր բարեկամների մարդասիրական ոգին է մեզ հնարավորություն տալիս վստահորեն առաջ նայել, զարգացնել մեր կարողությունները և ռեսուրսներ հայթայթել՝ ի նպաստ խոցելի խմբերի:

Մարդասիրությունն է այն ուժը, որի շուրջ պարտավոր ենք միավորվել բոլորս՝ օգնության կարիք ունեցող մարդկանց կյանքը բարելավելու և կայուն զարգացում ապահովելու համար:

that fled to Armenia, the majority of whom became our beneficiaries.

Our activities are based on a voluntary strength and humanitarian spirit. For our achievements and successes during this year we also owe to our volunteers, as great job has been done on their involvement, training, as well as raising awareness of the importance of volunteerism.

In 2014, for its activities ARCS was highly appreciated by the UN Armenian Mission and on the World Humanitarian Day was awarded as a “Humanitarian Hero”.

Summarizing another year of our activities, we thank those who trusted in us, to our partner organizations and individuals, donors and volunteers. The humanitarian spirit of our friends enables us to look ahead confidently, to develop our capabilities and mobilize resources for the benefit of vulnerable groups.

Humanity is the power around which we all must unite to improve the life conditions and to provide sustainable development to the people in need.



Մխիթար Մնացականյան
Նախագահ
Mkhitar Mnatsakanyan
President



Աննա Եղիազարյան
Գլխավոր քարտուղար
Anna Yeghiazaryan
Secretary General



**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը** (ՀԿԽԸ) հիմնադրվել է 1920թ. մարտի 19-ին Սպանդարատ Կամսարականի կողմից:

**The Armenian Red Cross Society** (ARCS) was founded on March 19, 1920 by Spandarat Kamsarakan.

**ՀԿԽԸ կայացման ուղին**

Կարմիր Խաչն իր մարդասիրական առաքելությունը Հայաստանում սկսել է 1877թ., երբ Ֆիննական Կարմիր Խաչի դաշտային հոսպիտալները հիմնվեցին Էրիվան նահանգում, ինչպես նաև 1896թ., երբ Ամերիկյան Կարմիր Խաչի կամավոր Կլարա Բարտոնը օգնություն ցուցաբերեց Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ տառապող հայ բնակչությանը:

**Review of ARCS foundation**

The Humanitarian Mission of Red Cross in Armenia started in 1877, when field hospitals of the Finnish Red Cross were established in Erivan region, as well as in 1896, when Clara Barton, a volunteer of the American Red Cross was assisting heavily suffering Armenian population in Osmanian Turkey.

| | | |
|---|---|---|
| ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը | **1920** | The Parliament of RA ratified the Statutes of ARCS |
| ՀԿԽԸ ժամանակավոր դադարից հետո վերսկսեց գործունեությունը | **1921** | The activities of ARCS were resumed after temporary cancellation |
| Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց կանոնադրությունը | **1922** | The activities of ARCS were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic |
| ՀԿԽԸ դարձավ ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների դաշինքի անդամ | **1925** | ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent Societies of USSR |
| ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ հռչակվեց որպես ՀՀ գործող Կարմիր Խաչի միակ ազգային ընկերություն | **1992** | ARCS was declared as the only National Society in the country during the 14th session of General Assembly of ARCS |
| ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը | **1992** | “Gratsia” International Rehabilitation Center of ARCS was established in RA |
| ՀՀ միացավ 1949թ. Ժնևի 4 Կոնվենցիաներին և դրա 1977թ. առաջին և երկրորդ Լրացուցիչ արձանագրություններին | **1993** | RA ratified the Geneva Conventions of 1949 and its first and second Additional Protocols of 1977 |
| ՀԿԽԸ ճանաչվեց ՀՀ նախագահի հրամանագրով | **1993** | ARCS was recognized by the RA President’s statement |
| ՀԿԽԸ ճանաչվեց Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի կողմից որպես 166-րդ ազգային ընկերություն | **1995** | ARCS was recognized by the International Committee of the Red Cross and the 166th National Society |
| ՀԿԽԸ դարձավ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միջազգային ֆեդերացիայի անդամ | **1995** | ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies as its full member |
| Սոլֆերինո նահանգի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը | **1997** | ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 13-րդ Համագումարում ՀԿԽԸ-ն երկու տարի ժամկետով ընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | **2001** | ARCS was elected as member of Organizational Development Commission by the 13th session of IFRC General Assembly |
| ՀՀ Ազգային Ժողովն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը | **2002** | The National Assembly of RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 14-րդ համագումարում ՀԿԽԸ-ն վերընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | **2003** | ARCS was re-elected as a member of Organizational Development Commission by the 14th session of IFRC General Assembly in Geneva |
| Սեուլում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ Համագումարում ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց Երիտասարդական հանձնաժողովի անդամ | **2005** | ARCS Youth Department was elected as a member of Youth Commission during the session of IFRC General Assembly in Seoul |
| Ավստրիայում կայացած Եվրոպական համագործակցության համաժողովի ժամանակ ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց որպես կոորդինացման կոմիտեի անդամ | **2005** | ARCS Youth Department was elected as a member of Coordination Committee by European Coordination Committee in Austria |
| Աթենքում կայացած հանդիպման ժամանակ ՀԿԽԸ Աղետների կառավարման բաժինն ընդգրկվեց Եվրոպական ԿՄ և ԿՄ ԱԸ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցում | **2006** | ARCS Disaster Management and Population Movement Department was included as a member in European RC/RC NSs Network for Psychological Support during the meeting in Athens |
| ՀՀ միացավ Ժնևի կոնվենցիաների 2005թ. 3-րդ լրացուցիչ արձանագրությանը: | **2011** | RA ratified the third Protocol to Geneva Conventions of 2005 |

## ՀԿԽԸ Առաքելությունը

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

## Նպատակը

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, դասակարգային պատկանելությունից, կրոնական և քաղաքական հայացքներից:

## Նախագահ

Մխիթար Մնացականյան

## Գլխավոր քարտուղար

Աննա Եղիազարյան

## Պատվավոր նախագահ

Աշոտ Սարգսյան

## Պատվավոր անդամներ

| | |
|---|---|
| Ռիտա Փարսադանյան | ՀԿԽԸ նախագահ 1975-1991թթ. |
| Պիեռ Միշո | Ֆրանսիական Կարմիր խաչ |
| Գերհարդ Մայեր | Գերմանական Կարմիր խաչ |
| Դերենիկ Դումանյան | ՀՀ Առողջապահության նախարար 2012-2014 |
| Գագիկ Մարտիրոսյան | ՀՀ Պետնախարար 1993-1995 |
| Գուֆար Կուրմաև | Ռուսական Կարմիր Խաչ, փրկարար |
| Հարություն Եսոյան | ՀԿԽԸ փրկարար |
| Վալերի Վարդանյան | ՀԿԽԸ փրկարար |
| Կլաուս Հիկե | Բավարական Կարմիր խաչ |
| Մայքլ Ուիբե | Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն |
| Կառլ Շայդե | քահանա, Գթության խոհանոցի ղեկավար |

## Բարերարի կոչում ստացած կազմակերպություններ

Կապանի «Դենո Գոլդ Մայնինգ քամփնի» ՓԲԸ
Գերմանական Կարմիր խաչի Բադեն- Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն

## Ընդհանուր տեղեկություններ

| | |
|---|---|
| Մարզային մասնաճյուղ | 11 |
| Տարածքային մասնաճյուղ | 3 |
| Համայնքային մասնաճյուղ | 52 |
| Աշխատակիցներ | 70 |
| Անդամներ | 3400 |
| Կամավորներ | 3200 |
| «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն | 1 |
| Բարեգործական ճաշարան | 3 |
| Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն | 1 |
| Հյուրանոցային համալիր | 1 |
| Տարածաշրջանային բազա | 1 |
| Ուսումնական կենտրոն | 1 |

## ARCS Mission

To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity, to be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population, to provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

## Goal

The overall goal of the Society is to prevent and alleviate human sufferings, regardless of nationality, race, sex, religious beliefs, class and political opinions.

## President

Mkhitar Mnatsakanyan

## Secretary General

Anna Yeghiazaryan

## Honorary President

Ashot Sargsyan

## Honorary Members

| | |
|---|---|
| Rita Parsadanyan | ARCS President throughout 1975-1991 |
| Pier Michaud | French Red Cross |
| Gerhard Mayer | German Red Cross |
| Derenik Dumanyan | RA Minister of Healthcare 2012-2014 |
| Gagik Martirosyan | State Minister, RA 1993-1995 |
| Gaphur Kurmayev | Russian Red Cross, Rescuer |
| Harutyun Yesoyan | ARCS, Rescuer |
| Valeri Vardanyan | ARCS, Rescuer |
| Claus Heike | Bavarian Red Cross |
| Michael Uibel | German Red Cross Baden-Wurtemberg Provincial Branch |
| Karl-Heinz Scheide | Priest, Coordinator of Soup Kitchen Program |

## Benevolent organizations

Deno Gold Mining Company
German Red Cross Baden Wurttemberg Provincial Branch

## Overview

| | |
|---|---|
| Regional Branches: | 11 |
| Territorial Branches: | 3 |
| Community Branches: | 52 |
| Employees: | 70 |
| Members: | 3400 |
| Volunteers: | 3200 |
| “Gratsia” International Rehabilitation Centre: | 1 |
| Charity kitchens: | 3 |
| First Aid Training Methodological Centre: | 1 |
| Hotel Compound: | 1 |
| Regional Warehouse Base: | 1 |
| Training Centre: | 1 |



# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել համայնքների բնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում սոցիալական աջակցության և առողջապահության ոլորտներում**

# SOCIAL SUPPORT AND HEALTHCARE

**With the purpose of assisting the state structures, decreasing social vulnerability of the people in need, as well as improving health conditions of people in communities, the Armenian Red Cross Society implements large-scale activities in social support and healthcare spheres**

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է բազմաբնույթ սոցիալական ծրագրեր՝ ուղղված միայնակ, փախստական ծերերի, նացիոնալ-սոցիալիստների զոհերի ընտանիքների, առավել կարիքավոր հանրակացարանաբնակ, ծնողազուրկ, ինչպես նաև հաշմանդամ երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը: ՀԿԽԸ սոցիալական բաժնի աշխատանքներն ընդգրկում են մի շարք ոլորտներ՝ բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրում, սոցիալական ծառայությունների մատուցում, սննդամթերքի և հագուստի բաշխում, հոգեբանական աջակցության և խորհրդատվության տրամադրում:

### Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք

2014 թ. ավարտվեց «Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք» ծրագիրը, որը ֆինանսավորվում էր Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային միավորման և գերմանական «Հիշողություն, Պատասխանատվություն, Ապագա» հիմնադրամի կողմից: Ծրագրում ընգրկված էր 60 շահառու Երևանից, Վանաձորից, Իջևանից, Նոյեմբերյանից և Բերդից:
Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ կամավորներն ու բուժքույրերը հոգեբանական աջակցություն և բժշկական խնամք են տրամադրել շահառուներին, օգնել տնային գործերում, իսկ ամիսը մեկ անգամ էլ՝ բաժանել սնունդ և հիգիենիկ պարագաներ:

### Սոցիալ-հոգեբանական աջակցություն հանրակացարանաբնակ փախստական ծերերին և երեխաներին

Ծրագրում ընդգրկված են 7-14 տարեկան հանրակացարանաբնակ 70 երեխաներ,70 միայնակ փախստական ծերեր՝ Երևանի թվով 2 հանրակացարաններից:

Ծրագիրը ունի 2 բաղկացուցիչ՝աջակցություն միայնակ փախստական ծերերին, որի շրջանակներում կամավորները այցելում են շաբաթը մեկ անգամ շահառու տատիկ-պապիկներին, օգնում են տնային գործերում, կազմակերպում սոցիալական և մշակութային միջոցառումներ: Ամիսը մեկ անգամ տատիկ-պապիկներին տրվում են սննդի փաթեթներ, երեք ամիսը մեկ անգամ հիգիենիկ պարագաներ: Ձմռան ամիսներին ծրագիրը նախատեսում է նաև շահառուների կոմունալ ծախսերի (էլեկտրաէներգիայի) մասնակի փոխհատուցում:
Ծրագրի երկրորդ բաղկացուցիչը վերաբերում է հանրակացարանաբնակ երեխաների հետ տարվող աշխատանքներին, որի շրջանակներում ծրագրի կամավորները շաբաթվա ընթացքում բազմաբնույթ դասընթացներ են կազմակերպում հանրակացարանաբնակ երեխաների համար ՀԿԽԸ կողմից հիմնադրված «Ժպիտների ակումբ» դասասրահում, օգնում են երեխաներին իրականացնել տնային հանձնարարականները, կազմակերպում ացելություններ մշակութային վայրեր, իրականացնում կինոդիտումներ և քննարկումներ

# SOCIAL SUPPORT

Armenian Red Cross Society is implementing various social programs aimed at the lonely, elderly refugees, families of national-socialists victims, most needy dormitory orphans, as well as the improvement of social conditions of disabled children.
Works of the Social department of the ARCS includes number of areas such as investigating social conditions of population, social services, food, clothing, psychological and counseling support.

### Psychosocial and Medical support to National Socialism in Armenia

In 2014, has summed up the “Psychosocial and Medical support to National Socialism in Armenia” project with funding of Baden Wurttemberg Provincial Branch of the German Red Cross and “Memory, Responsibility, Future” German foundation. 120 beneficiaries were included in the project from Ijevan, Vanadzor, Noyemberyan, Berd, Gyumri and Yerevan.
In the frames of the project, ARCS volunteers and nurses provided psychological support, as well as nurse care, helped in house work, distributed parcels of food and hygiene supplies on a monthly basis.

### Psycho-social support to the elderly and children refugees living in dormitories

There are 70 children (aged 7-14), 70 lonely elderly people and 24 volunteers involved in the program. The program includes two dormitories from Yerevan city.

The program has two main components. The first component is the psycho-social support to lonely refugee elderly. In the framework of this program volunteers visit the beneficiaries once a month, help them with housework, and organize social /cultural events. Once a month hygienic kits, and once every three months food parcels are distributed to the elderly people. The program also partially covers electricity costs in the winter months.
The second component of the program is the work with children living in dormitories. In the framework of this program volunteers organize various lesson sessions for children who live in dormitories. The Classes take place in rooms that have specially been allocated to the “Smiley Club” program of the ARCS. Volunteers help the children with their homework, organize visits to cultural places, watch films and have discussions on interesting topics. During summer a camp for children who are most in need

իրենց հետաքրքրող թեմաներով: Ամռան ամիսներին կազմակերպվում է ճամբար հանրակացարաբնակ առավել կարիքավոր երեխաների համար: ՀԿԽԸ-ն համագործակցելով Orange Armenia բջջային օպերատորի հետ, հանրակացարանաբնակ երեխաների համար կազմակերպում է համակարգչային և ինտերնետի դասընթացներ: Դասընթացների իրականացման համար Orange Armenia-ի կողմից տրամադրվել են դյուրակիր համակարգիչներ և շարժական ինտերնետ կապ:
Ծրագրի իրականացման վերջին 5 տարիների ընթացքում կարճաժամկետ ընդհատումներ են եղել, սակայն կամավորները չնայած ֆինանսական միջոցների բացակայությանը շարունակել են այցելությունները, որը կամավորական գործունեության նվիրվածության, մարդասիրական արժեքների դրսևորման, երիտասարդ և ավագ սերնդի միջև տարիների ընթացքում հաստատված սերտ բարեկամական կապերի վառ ապացույց է:

### «Նրանք սպասում են մեզ…». լուսանկարների ցուցահանդես

Ապրիլի 9-ին, «Մոսկվա» կինոթատրոնի սրահում տեղի ունեցավ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կազմակերպված լուսանկարների ցուցահանդեսի բացումը՝ «Նրանք սպասում են մեզ…» խորագրով: Ցուցադրված լուսանկարներում ներկայացված էին հանրակացարանաբնակ միայնակ ծերերի կյանքն ու առօրյան՝ նպատակ ունենալով հանրության ուշադրությունը հրավիրել նրանց սոցիալ- տնտեսական, առողջապահական և հոգեբանական խնդիրների վրա, ինչպես նաև իրականացնել հանգանակություն՝ շուրջ 70 հանրակացարանաբնակ տարեցներին աջակցություն տրամադրելու համար:

### Հունիսի 1-ը տոն՝ «Ժպիտների ակումբի» երեխաների համար

Հունիսի 1-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը «Դալմա Գարդեն Մոլ» առևտրի կենտրոնի հետ համատեղ՝ Երևանի հանրակացարանաբնակ երեխաների համար կազմակերպել էր «Պարգևենք ժպիտ երեխաներին» ժամանցային միջոցառումը:
Այդ օրը, 6-14 տարեկան 45 երեխաներ անցկացրեցին «Դալմա Գարդեն Մոլ» առևտրի կենտրոնում: Ժամանցային միջոցառումը մեկնարկեց առավոտյան՝ «Սինեմա Սթար» կինոդահլիճում՝ մուլտֆիլմի դիտումով: Այնուհետև առևտրի կենտրոնի տարբեր հատվածներում գործող հատուկ կահավորված տաղավարներում հանրակացարանաբնակ երեխաները մասնակցեցին տիկնիկային և կրկեսային ներկայացումների, մանկական նորաձևության ցուցադրության, շփվեցին հեքիաթների հերոսների հետ:
Մայիսի 23-ին «Դալմա Գարդեն Մոլ» առևտրի կենտրոնում տեղադրվել էր նվերների և հանգանակությունների արկղ, որտեղ մինչև հունիսի 1-ը նվերներ և գումար հավաքվեց «Ժպիտների ակումբ» ծրագրի երեխաների համար:

### «Օգնել. Ես կարող եմ, Դու կարող ես, Մենք կարող ենք…» երկրորդ փուլ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Գերմանական Կարմիր խաչի հետ համատեղ՝ Գերմանական՝ Եվրոպական Խաղաղության հիմնադրամի ֆինանսավորմամբ, իրականացրեց «Օգնել. Ես կարող եմ, Դու կարող ես, Մենք կարող ենք…» երկրորդ փուլը:

is organized. ARCS in the cooperation with Orange Armenia is organizing computer lessons for dormitory children. For conducting the classes the computers and internet connection were provided by Orange Armenia telephone operator.

Although the program had several financial gaps in the last 5 years, our volunteers never stopped their visits, which are proof of commitment, demonstration of humanitarian values and long-lasting tight connection between younger and old generations.

### Photo Exhibition “They are waiting for us”

On 9 April, Armenian Red Cross Society organized a photo exhibition titled “They are waiting for us ...” at “Moscow” Cinema hall. The photos were presenting everyday life of lonely elderly people living at dormitories in order to draw public attention to their socio-economic, health and psychological problems, as well as make fundraising to provide support of about 70 elderly beneficiaries.

### 1 June, “Giving smile to children”

On 1 June, Armenian Red Cross Society in cooperation with “Dalma Garden Mall” shopping center organized “Giving smile to children” entertainment event for children living in dormitories of Yerevan.
On that day, from 10:30 to 17:30, 45 children aged 6 to14 y, spent at “Dalma Garden Mall” shopping center. Entertainment event started in the morning, by watching a cartoon in the “Cinema Star” hall. After that, in the special decorated pavilions in the different parts of the trade center, children participated in the puppet and circus performances, children’s fashion show and communicated with the heroes of the tales.
On 23 May, until 1 June, gifts and donations boxes were placed in the “Dalma Garden Mall” shopping center, to collect presents and money to support children living in dormitories engaged in the “Smiley Club” project.

### Help, I Can, You Can, We Can

Armenian Red Cross Society has implemented the Second phase of “Help, I Can, You Can, We Can…” project jointly with German Red Cross and by finance of European Peace foundation.
The aim of the project was to inform the society about the social, psychological, household issues of disabled people and teach how to help them.
During the second phase of the project 12 Armenian young people aged 14-17 (including those with disabilities), visited Baden-Wurttemberg, Germany to participate in one-week event together with their peers. They took part in First Aid, Healthy Lifestyle and Care of People with Disabilities trainings.
The first phase of the project with the same participants was implemented in Armenia, 2013.

Ծրագրի նպատակն էր գերմանացի և հայ 23 երեխաներին (այդ թվում նաև՝ հաշմանդամ) տեղեկացնել հաշմանդամ մարդկանց առջև ծառացած սոցիալական, հոգեբանական և կենցաղային խնդիրների մասին: Ծրագրի երկրորդ փուլին 14-17 տարեկան 12 հայ աշակերտներ՝ այդ թվում նաև սահմանափակ կարողություններ ունեցողներ, մեկնեցին Գերմանիայի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամաս գերմանացի իրենց հասակակիցների հետ մեկշաբաթյա միջոցառումների մասնակցելու: Նրանք մասնակցեցին առաջին օգնության, առողջ ապրելակերպի և հաշմանդամների խնամքի դասընթացների և նմանատիպ այլ միջոցառումների:
Ծրագրի առաջին փուլը նույն երեխաների մասնակցությամբ տեղի էր ունեցել Հայաստանում՝ 2013թ. աշնանը:

## Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում

2014թ.- ից Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Դանիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ իրականացնում է «Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում» ծրագիրը, որը հիմնված է Կարմիր խաչի/Կարմիր մահիկի Ազգային Ընկերությունների ֆեդերացիայի (ԿԽՄՖ) և «Սեյվ դը Չիլդրեն» հիմնադրամի կողմից համատեղ մշակված մեթոդի հիման վրա: Ընդհանուր առմամբ ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում սիրիահայ երեխաների ինտեգրման գործընթացին և կայուն զարգացմանը: Ծրագրի շրջանակներում Երիտասարդ կամավորների կողմից, Երևանի թվով 13 դպրոցներում կազմակերպվել են սիրիահայ և տեղացի երեխաների մասնակցությամբ ինտերակտիվ պարապմունքներ:
Երեխաները պարապմունքներին մասնակցում են մինչև 18 անձից բաղկացած խմբերով և ոչ ֆորմալ մեթոդներով՝ դերախաղեր, քննարկումներ, նկարչություն, պար և այլն, անդրադառնում այնպիսի խնդիրների, ինչպիսին են վախի և սթրեսի հաղթահարումը, շրջակա միջավայրի ճանաչումը, ապագայի կառուցումը և այլն: Ծրագրում կարևոր տեղ է հատկացվում նաև մշակութային և համայնքային միջոցառումներին, որոնք պարտադիր են յուրաքանչյուր խմբի համար և նախատեսում են այցեր տարբեր մշակութային և պատմական հաստատություններ՝ թանգարաններ, պատկերասրահներ, թատրոններ և մոտակա տեսարժան վայրեր, ինչպես նաև աշխատանքներ համայնքներում՝ շաբաթօրյակներ, կանաչապատում և այլն: Ծրագրի ավարտին կազմակերպվելու է նաև ամառային ճամբար, այն երեխաների համար, ում հետ հավելյալ աշխատանքի կարիք է զգացվում:

## Syrian Armenian Children Resilience program in Armenia

Armenian Red Cross Society, in cooperation with the Danish Red Cross, implements “Syrian Armenian Children Resilience program in Armenia” project starting from August, 2014. The project was designed based on the method developed jointly by RC/RC Federation (IFRC) of National Societies and Save the Children Fund. The project aims to support the integration and resilience of Syrian-Armenian children. After extensive organizational works, starting from November, 2014 in 13 schools of Yerevan interactive trainings have been organized with the participation of Syrian-Armenian and local children. Children take part in the sessions up to 18 member in a group with non-formal methods such as role plays, discussions, drawing, dancing, etc., addressing such issues as overcoming fear and stress, studying environment, future plans and etc.
Special importance is given to the cultural and community events. Which are mandatory for each of the groups and intend visits to various cultural and historical sites, as well as working in communities: tree planting, etc. At the end of the Program summer camp will be organized for the children, who need additional assistance.

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ակտիվ գործունեություն է ծավալում նաև առողջապահության ոլորտում: Այս բնագավառում ՀԿԽԸ Առողջապահական բաժինը 2014թ. ընթացքում իրականացրել է «Կանգնեցնել ԲԴԿ ՏԲ Հայաստանում», «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում», «ՄԻԱՎ-ի նվազեցումը Լոռու մարզի ԹՆՕ-երի շրջանում» և «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրերը:

## Կանգնեցնել ԲԴԿ ՏԲ Հայաստանում

«Կանգնեցնել ԲԴԿ ՏԲ Հայաստանում» ծրագրի շրջանակներում Երևանի երեք պոլիկլինիկաներում ամեն ամիս միջինը 30 ԴԿ ՏԲ հիվանդներին և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվում է սոցիալ-հոգեբանական աջակցություն, կրթում-լուսաբանում: Ծրագիրը ֆինանսավորում է «Էլայ Լիլի և կոմպանիա» կազմակերպությունը:

## Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում

2014թ. ՀԿԽԸ-ն շարունակել է իր գործունեությունը ՏԲ ոլորտում՝ իրականացնելով «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագիրը հանրապետության ամբողջ տարածքում, որը «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մի մասն է: Ծրագիրը ֆինանսավորում է Գլոբալ հիմնադրամը, որի ստացողը հանդիսանում է ՀՀ Առողջապահության նախարարությունը, իսկ ենթաստացողը՝ ՀԿԽԸ-ն:

**Ծրագիրն իրականացվում է հետևյալ ուղղություններով.**

- Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում ամբողջ ՀՀ տարածքով,
- Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին թարմ սննդային փաթեթների բաշխում ստացիոնարում, սննդային և հիգիենիկ փաթեթների բաշխում պահպանողական փուլում, ձմռան 3.5 ամիսների ընթացքում ջեռուցման ծախսերի փոխհատուցում, դեղերի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյութերի տրամադրում ամբողջ ՀՀ տարածքով,
- Խորհրդատուների աշխատանքային խմբի միջոցով աշխատանքների կազմակերպում, կրթական-խորհրդատվական սեմինարների կազմակերպում ՏԲ հիվանդների համար՝ բուժման նկատմամբ հետևողականության բարձրացման նպատակով,
- Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն և Ռեգ ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ՈՒՎԲ (DOT) ռազմավարության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում

2014թ. ընթացքում ռեգուլյար ՏԲ հիվանդներին բաշխվել է 6171 սննդային և 6171 հիգիենիկ փաթեթ, դեղակայուն ՏԲ հիվանդներին՝ 4238 սննդային և 2119 հիգիենիկ փաթեթ, բուժումը ձախողած ՏԲ հիվանդներին՝ 134 սննդային և 67 հիգիենիկ փաթեթ:

# HEALTH AND CARE

During 2014 Armenian Red Cross Society has implemented the following programs in the health sphere mainly in the sphere of HIV/AIDS and Tuberculosis'.- "Social Support to TB Patients", "Stop MDR TB in Armenia" , "HIV Prevention among IDUS in Lori Marz", "HIV prevention in Armenia" projects.

## "Stop MDR TB in Armenia"

Within the frames of "Stop MDR TB in Armenia" programme 30 MDR TB patients and their family members in 3 policlinics of Yerevan city were provided with psycho-social support, education-dissemination. The project is funded by "Eli Lilly and Company".

## "Social support to TB patients"

In 2014 ARCS continues its activities in the TB sphere by implementing "Social support to TB patients" programme on the entire territory of RA, which is a part of TB National program. The program is funded by the Global Fund whose recipient is the Ministry of Health and sub-recipient is ARCS.

**The program is implemented in the following directions:**

- Provision of food and hygienic parcels to TB patients in Yerevan and RA regions with the purpose of increasing the treatment adherence.
- Provision of fresh food in ATBD, provision of food and hygienic parcels in outpatient phase, provision of heating costs for 3.5 winter months as well as provision of juice to MDR TB patients in Yerevan and RA regions with the purpose of reducing the harmful effects of drugs
- Organization of work through consultants of working group; implementation of the educational-consultative trainings for TB patients with the purpose of increasing the treatment adherence.
- Provision of transportation costs to TB/MDR patients or social workers within Directly Observed Treatment (DOT) strategy.

In 2014 within ''Social support to TB patients'' Programme 6171 food and 6171 hygienic parcels were distributed to TB patients, 4238 food and 2119 hygienic parcels to MDR TB patients and 134 food and 67 hygienic parcels for Failure patients.





THE OFFICIAL SITE OF YEREVAN MUNICIPALITY ©



## Առողջ ապրելակերպ

2014թ. Երիտասարդ կամավորների կողմից ծավալած Առողջ ապրելակերպի խթանման գործունեությունը նոր թափ հավաքեց. արդեն ավանդական դարձած հավասարը հավասարին մեթոդով կազմակերպվող դասընթացներին զուգահեռ, երիտասարդ կամավորները սկսեցին իրագործել իրազեկման բարձրացման նոր ձևաչափ՝ էլեկտրոնային ուսուցում: ԵԿԽ երիտասարդ լիդերը, 2013թ. արտասահմանում մասնակցել էր ԿԽՄՖ կողմից կազմակերպած «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման վարժանքի», ինչից հետո նման վարժանք կազմակերպվեց ՀԿԽԸ կամավորների համար՝ արդեն Հայաստանում: Անցած տարվա ընթացքում երիտասարդների հետ առողջապահական թեմաներով հավաքների ժամանակ տեղեկացվում էր ՈՎՀ վերաբերյալ էլ. վարժանքի մասին, ինչը գտնվում է ԿԽՄՖ կրթական հարթակում և հասանելի է թե Կխ շարժման մասնակիցներին և թե երիտասարդներին: 2014թ. վերջին մշակվեց նաև հաջորդ տարում իրականացվող գործունեության պլան՝ ներառյալ երկու դրամաշնորհների դիմելը:

## ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Իտալական Կարմիր խաչի աջակցությամբ 2014 թ. շարունակել է իրականացնել «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը: Ծրագիրը նպատակաուղղված է ՄԻԱՎ-ի արդյունավետ հակազդմանը՝ բնակչության առավել խոցելի խմբերի (թմրամիջոցների ներարկային օգտագործողների) շրջանում, և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց բուժման, խնամքի ու աջակցության խթանմանը՝ քարոզչության միջոցով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական/կրթական աշխատանքներ և տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ ծրագրում ընդգրկված շահառուներին: Ծրագիրն իրականացվել է Երևանում և Վանաձորում:

«ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը համագործակցում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական Թեմի «Ցերեկային կենտրոն»-ի հետ: Վերջինիս նպատակն է՝ նվազեցնել ՄԻԱՎ-ով ապրող և ներերակային թմրամիջոցներ օգտագործող մարդկանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական մեկուսացումը և նպաստել նրանց ինտեգրմանը, սոցիալական վիճակի բարելավմանը, հոգևոր արժեքների ձեռքբերմանը: Կենտրոնը գործունեություն է ծավալում ինչպես Երևանում, այնպես էլ՝ մերձակա շրջաններում՝ բազմաբնույթ աջակցություն տրամադրելով շահառուներին:

## ՄԻԱՎ-ի նվազեցումը Լոռու մարզի ԹՆՕ-ների շրջանում

«ՄԻԱՎ-ի նվազեցումը Լոռու մարզի ԹՆՕ-ների շրջանում» ծրագրի նպատակն է Վանաձոր, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներում նվազեցնել Թմրանյութեր ներերակային օգտագործողների (ԹՆՕ-ների) խոցելիությունը ՄԻԱՎ-ի և այլ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների նկատմամբ: 2014թ. շահառուների թիվը հասել է 189-ի: Ծրագրի շրջանակներում ԹՆՕ-ները

## Healthy Lifestyle

In 2014, promotion of Healthy Lifestyle activities initiated by Young volunteers, went to its second stage. Parallel with the training sessions by the traditional peer to peer method, Young volunteers started to implement new format of awareness raising; electronic learning. RCY young leader participated in “No to non-communicable diseases” training organized by IFRC, and organized the same training for ARCS volunteers. During the year, at all the meetings on Health issues with the volunteers, they were informed on el. Learning about NCD, which is on IFRC Educational Platform and is available for RC Movement participants and Youth. At the end of 2014, Action plan for the coming year was developed, including applying for 2 grants.

## HIV Prevention in Armenia

Armenian Red Cross Society, with the support of Italian Red Cross, continued the implementing “HIV Prevention in Armenia” program during the 2014. The program aims at both advancing the impact of effective HIV prevention among vulnerable and high-risk groups (e.g. injection drug users (IDUs)) and advocating people living with HIV (PLHIV) and IDUs to HIV/AIDS treatment, care and support. In the frames of the project, awareness/education activities were conducted, as well as social support was provided to the beneficiaries of the project. It was implemented in Yerevan and Vanadzor. Within the framework of the program ”HIV Prevention in Armenia”, Armenian Red Cross Society collaborates with Armenian Apostolic Church Araratian Patriarchal Diocese Day Center.

The Center aims at reducing social isolation of injection drug users and people living with HIV, promoting their integration into society, as well as contributes to improving their social status and connecting them to spiritual values. The Center’s activities are focused in Yerevan, as well as in different regions of Armenia, providing the beneficiaries with various types of support.

## HIV Prevention among IDUS in Lori Marz

“HIV Prevention among IDUS in Lori Marz” program was aimed at reducing the vulnerability of IDUs towards HIV, Hepatitis and other blood borne and sexually transmitted infections in Vanadzor, Stepanavan and Alaverdi cities. During 2014 the number of beneficiaries reached up to 189. Within the framework of the program VCT, legal, psychological counseling were implemented. Within the frames of the program the beneficiaries received disposable syringes, alcoholic pads and condoms. The project is funded by Global Fund and is implemented jointly with Mission East Armenia.






INSPIRON mini
ՄԻԱՎ
Մ - Մարդու
Ի - Իմունային
Ա - Անբավարարության
Վ - Վիրուս
DELL

ստացել են խորհրդատվություն/կամավոր խորհրդատվության և տեստավորման ուղեգրում, իրավաբանական, հոգեբանական, ինչպես նաև միանգամյա օգտագործման ներարկիչներ, պահպանակներ, ալկոհոլային խծուծներ: Ծրագիրը ֆինանսավորում է Գլոբալ հիմնադրամը և իրականացվում է «Առաքելություն Արևելք» կազմակերպության հետ համատեղ:

### ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում

«ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը 2014թ. իրականացվել է Վանաձոր, Գյումրի և Երևան քաղաքներում 15-23 տարեկան երիտասարդության և ուսանողության շրջանում: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ ուսանողների համար ՝ հավասարը հավասարին հիմունքով, ինչպես նաև «Հարց և պատասխան» սեմինարներ դասախոսական կազմի համար: Երիտասարդներին տրամադրվել են տեղեկատվական նյութեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ, ինչպես նաև ապահովվել է խորհրդատվություն՝ այցելության և հեռախոսազանգի միջոցով: Ծրագիրը ֆինանսավորում է Ամերիկյան Կարմիր խաչը:

### Մոմավառության արարողություն՝ ի հիշատակ ՁԻԱՀ-ից մահացած մարդկանց

Մայիսի 18-ին՝ ՁԻԱՀ-ից մահացած մարդկանց հիշատակի օրը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կազմակերպել էր մոմավառության երթ: Երթին մասնակցում էին Երիտասարդական Կարմիր խաչի 60 կամավորներ: Այն մեկնարկեց ժ.18:30-ին՝ ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակից ավարտվեց Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի այգում: Ժամը 20:00-ին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիային հարող այգում կայացավ մոմավառության արարողություն՝ դասական երաժշտության ուղեկցությամբ: Մոմավառության տաղավարից բացի միջոցառման վայրում գործում էին նաև տեղեկատվական տաղավար, որտեղ ՀԿԽԸ կամավորները լուսաբանեցին օրվա խորհուրդը՝ անցորդներին տրամադրելով ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի խնդրի վերաբերյալ նյութեր, խրախուսելով նրանց կրել կարմիր ժապավեն և մասնակցել մյուս բոլոր տաղավարներում իրականացվող միջոցառումներին, հիշատակման ծածկոցի («Քվիլթ») տաղավար, որտեղ մասնակիցները, միացնելով կտորները ստացան ծածկոց, որի յուրաքանչյուր կտոր նվիրված էր ՁԻԱՀ- ից մահացած մեկ մարդու հիշատակին, քննարկման տաղավար, որտեղ անցորդներին հնարավորություն տրվեց արտահայտել իրենց կարծիքը, ամփոփել օրվա ընթացքում ստացած տեղեկատվությունն ու տպավորությունները:

### HIV prevention in Armenia

“HIV prevention in Armenia” programme is implemented in Vanadzor, Gyumri and Yerevan cities within youth aged 15-23. Within the frames of the program peer to peer educational seminars were organized for students as well as Q&A sessions were organized for the faculty members. The students were provided with the informative materials on HIV/AIDS, as well as they were provided with counseling through calls and visits. The project is funded by American Red Cross.

### International AIDS Candlelight Memorial day

On 18 May, International AIDS Candlelight Memorial day, Armenian Red Cross Society organized a candlelight march. Red Cross Youth 60 volunteers were participating in that march. It started at 18:30 from the ARCS headquarters and proceeded to Garden at the State Conservatory named after Komitas. At 20:00, Candlelight ceremony, accompanied by classical music, took place there. Besides the candlelight ceremony there were also: Informative pavilion - where ARCS volunteers were disseminating the meaning of the day, by providing passers with leaflets about HIV/AIDS issues. They were encouraging them to wear red ribbons and to participate in all events that are taking place in other pavilions, Quilt pavilion – where participants got the Quilt, by connecting the parts of the blankets, each part of which was dedicated to one AIDS victim, Discussion pavilion - where participants were given an opportunity to express their opinions, summarize the information and impressions received during the day



# «ԳՐԱՑԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, հիվանդների մասնագիտական ուսուցում, սոցիալ-հոգեբանական վերականգնում, սանատոր-կուրորտային բուժում**

# “GRATSIA” INTERNATIONAL REHABILITATION CENTER

**The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients’ vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment**

«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, հիվանդների մասնագիտական ուսուցում, սոցիալ-հոգեբանական վերականգնում, սանատոր-կուրորտային բուժում:

Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բուժքույր, վերականգնող թերապիստ, հոգեբան և սպորտային մարզիչ:
Կենտրոնն ունի ընդլայնված ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ՝ ախտորոշում, ջրաբուժություն, ջրային մերսում, ցեխաբուժություն/տորֆաբուժություն, կինեզոթերապիա, ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, ասեղնաբուժություն սպորտային համալիր, սթրեսոլոգի կաբինետ, «ՍԿԵՆԱՌ» բաժանմունք:

Իր գործունեության ընթացքում կենտրոնում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել մոտ 11 000 հիվանդ ՀՀ-ից, ԱՊՀ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից: 2014թ. շրջանակներում բուժում է ստացել 730 հաշմանդամ, 80 զինծառայող, ԼՂՀ–ից սոցիալապես անապահով 20 հիվանդ, 5 փախստական, սոցիալապես անապահով խավի 60 ներկայացուցիչ, ոստիկանության համակարգի 15 աշխատող:

Կատարվում են նաև դիսպանսեր տնային այցելություններ հաշվառման վերցրած ողնաշարի և ողնուղեղի վնասվածքով հաշմանդամ հիվանդներին՝ ցուցաբերելով բժշկական օգնություն և հետազոտում:

Կենտրոնի «Փարոս» երգչախումբը և բասկետբոլի «Կիլիկիա» թիմը պարբերաբար մասնակցում են սահմանափակ կարողությունների տեր մարդկանց համար տարբեր երկրներում կազմակերպվող համերգներին և մրցումներին:

Կենտրոնը գլխավորում է բժիշկ և ադմինիստրատոր Ալեքսանդր Մնացականյանը:

The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients’ vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment.

In the Center each patient with marrow and spinal cord injuries is individually treated and cared by a doctor, nurse, rehabilitation therapist, psychologist and sport trainer.

The Center has broadened inpatient and outpatient rehabilitation services-diagnostics, hydropath, hydro massage, mud cure/peat cure, kinesotherapy, physiotherapy procedures, medical and classical massage, electrotherapy, inhalation therapy, acupuncture, sport complex, stressologists’ room, “SKENAR” Department.

During its activities about 11 000 patients from RA, CIS countries, from a number of European and Middle East countries have already received treatment and rehabilitation in the Center. During the 2014, 730 disabled people, 80 military men, 5 refugees, 60 socially vulnerable people, as well as 20 people from Nagorno-Karabakh,15 representatives of Police have been cured in the Center.

Dispensary home visits are also made to the registered disabled patients with spinal cord and marrow traumas, providing them with medical assistance and examination.

“Pharos” choir and “Kilikia” basketball team of the Center regularly participate in concerts and competitions organized for people with limited capacities in different countries and return with high appreciations.

Doctor and administrator Aleksandr Mnatsakanyan is the head of the Center.





# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

# DISASTER MANAGEMENT AND POPULATION MOVEMENT

# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը բնական և տեխնածին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետներին նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:

## Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ

2014 թ.-ին Ազգային ընկերությունը, Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի ընկերության ֆինանսավորմամբ, շարունակել է իրականացնել «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագիրը: Ծրագրի իրականացման համար, որպես թիրախ ընտրվել էին Երևան, Վանաձոր և Ստեփանավան քաղաքները, ինչպես նաև Լոռու մարզի չորս գյուղական համայնքներ:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել Հայաստանում գյուղական և քաղաքային համայնքների բնակչության խոցելիության նվազեցմանը աղետներից:

Այսպիսով, ծրագրի շահառուներն են թիրախային չորս գյուղական համայնքների մոտ 55.480 բնակիչներ՝ այդ թվում ուսուցիչներ, դպրոցականներ և նրանց հարազատները:

Հաշվետու տարում Վահագնի և Կողես համայնքների համար մշակվեցին խոցելիության և կարողությունների գնահատման (ԽԿԳ) զեկույցներ, որոնք ներառում են աղետներին նախապատրաստման և արձագանքման գործողությունների պլան և ռիսկային գոտիների քարտեզ՝ յուրաքանչյուր համայնքի համար: Ընդհանուր առմամբ, 70 համայնքի բնակիչ է մասնակցել ԽԿ գնահատմանը: Հանդիպումներ են անցկացվել թիրախային համայնքներում՝ ԽԿԳ արդյունքները ներկայացնելու և ամփոփելու նպատակով: Այնուհետև, ԽԿԳ զեկույցը տպագրվել է հայերեն և անգլերեն, բաշխվել թիրախային համայնքներին և համապատասխան շահագրգիռ կողմերին՝ մարզային և ազգային մակարդակում:

Վահագնի և Կողես համայնքներում ձևավորվել է Համայնքային երկու թիմ (ՀԹ)՝ յուրաքանչյուրում՝ 20 անդամ: Նրանք կնպաստեն նաև ԱՌՆ համայնքակենտրոն ծրագրերի իրականացմանը: Նոր ՀԹ-երին՝ Աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի վերաբերյալ համապատասխան գիտելիքներ տալու և նրանց պատրաստվածության բարձր մակարդակն ապահովելու համար, ՀԿԽԸ-ն՝ «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատ ՀԿ-ի հետ համատեղ, կազմակերպեց հետևյալ տեսական և գործնական դասընթացները՝ «ԱՌՆ ոլորտի հիմնական ուղղությունները, այդ թվում՝ խոցելիության, կարողությունների գնահատում», «Հյոգոյի գործողությունների ծրագիր», «Կլիմայի փոփոխություն և հարմարվողականություն», «Հնարավոր քայլերը աղետի ժամանակ», «Փրկարարական հիմունքներ և առաջին օգնություն», «Սոցիալ-հոգեբանական աջակցություն» և այլն:

Այնուհետև, ձեռք բերված գիտելիքներն ամրապնդելու նպատակով՝ ՀՀ Տարածքային կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարության

# DISASTER MANAGEMENT

The main aim of Disaster Management (DM) direction is to reduce the vulnerability of the population towards natural and man-made disasters through disaster risk reduction on a community level and strengthen Disaster Preparedness and Response (DPR) structure of the Armenian Red Cross Society (ARCS).

## Building safe and resilient communities

In 2014, the National Society continued implementation of "Building Safe and Resilient communities" project with the financial support of Austrian Development Agency and Austrian Red Cross. Yerevan, Vanadzor and Stepanavan cities, as well as four rural communities of Lori region are targets of the project.

The main objective of the project is to contribute towards reducing vulnerability to disasters of rural and urban population in Armenia.

Thus, the beneficiaries of the project are approximately 55.480 people from targeted four rural communities as well as teachers, schoolchildren of targeted schools and their relatives.

Vulnerability and Capacity Assessment (VCA) was conducted for Vahagni and Koghes communities, which includes Disaster Preparedness and Response plan of action and community risk areas mapping for each community.

Overall, 70 community inhabitants were involved in the VCA process. After that, meetings were organized in targeted communities for presenting and finalizing VCA results. VCA report was printed in Armenian and English languages and shared among targeted communities as well as relevant stakeholders on national and regional levels.

Two community teams were formed consisting of 20 members in each team in Vahagni and Koghes communities. Moreover, they will support the implementation of community centred projects aimed at disaster risk reduction. To provide new established CTs with corresponding knowledge in the sphere of Disaster Risk Reduction and Response, as well as ensure high level of preparedness, ARCS jointly with "LORE" rescue team organized the following theoretical and practical trainings: "General concepts in DRR including Vulnerability, Capacity Assessment", "Hyogo Framework of Action", "Climate Change & Adaptation", "Actions During Disasters", "First Aid and Rescue Skills", "Psychosocial Support" etc.

In order to strengthen gained knowledge simulation drills were

Լոռու մարզային փրկարար ծառայության և «ԼՈՌԷ» փրկարար ջոկատ ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվեցին դաշտային ուսումնավարժանքներ՝ չորս ՀԹ-ների համար: Ավելին, նախքան ուսումնավարժանքները, նոր ձևավորված երկու ՀԹ-ներին տրամադրվեց հատուկ փրկարարական գույք և հագուստ:

Թիրախային համայնքների՝ Վահագնի և Կողես, Վանաձորի, Ստեփանավանի, ինչպես նաև Երևանի 14 դպրոցների 80 ուսուցիչների համար կազմակերպվել է նաև հատուկ դասընթաց: Օրակարգում ընդգրկված էին «Առաջին օգնության», «Աղետների ռիսկերի նվազեցում», «Կլիմայի փոփոխություն» և այլ թեմաներ: Հետագայում դասընթացին մասնակցած ուսուցիչներն իրենց դպրոցների բոլոր աշակերտների համար կազմակերպեցին նմանատիպ դասընթացներ, ինչպես նաև բաժանեցին «Աղետի ընտանեկան պլան» թերթիկ-ուղեցույցը՝ իրենց ընտանիքի անդամների հետ ընտանեկան պլան մշակելու համար, որոնց հիման վրա թիրախային դպրոցներում կազմակերպվեցին մրցույթներ: Յուրաքանչյուր դպրոցում անցկացվել են նաև նկարչական մրցույթներ, որտեղ երեք լավագույն նկարները պարգևատրվել են խրախուսական մրցանակներով: Լավագույն նկարներով տպագրվել է 2015 թ.-ի սեղանի օրացույց, ինչպես նաև ուսումնական նյութեր ԱՌՆ, Կլիմայի փոփոխության և այլ թեմաներով, որոնք բաշխվել են թիրախային բոլոր դպրոցներին: Դպրոցների անվտանգությունն ապահովելու համար՝ նույն դպրոցներում, զինղեկների հետ միասին, վերանայվել են տարհանման սխեմաները, և տարհանման նշանների հետ մեկտեղ բաժանվել դպրոցներին՝ դրանք ավելի ապահով դարձնելու համար:

Հաշվետու տարում փոխըմբռնման հուշագիր ստորագրվեց Կուրթանի և Դարպասի համայնքապետարանների հետ՝ ծրագրի շրջանակներում ընտրված կանխարգելման ծրագրերին աջակցելու վերաբերյալ, որից հետո սկսվեցին գործնական աշխատանքները: Կուրթան համայնքում վերանորոգվեց 800 մ երկարությամբ խմելու ջրի համակարգը, որի խողովակաշարերը տրամադրեց Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ինչպես նաև իր փոքր ներդրումն ունեցավ «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունը. մնացած աշխատանքներն իրականացվել են տեղական իշխանությունների կողմից: Դարպաս համայնքում Ազգային ընկերության 10 % ներդրման աջակցությամբ վերանորոգվեց 327 մ երկարությամբ սելավատար ջրանցքը: ՀԿԽԸ թիմը վերահսկեց ամբողջ ընթացքը:

2014թ. փետրվարին Վրաստանում՝ Բակուրիանիում, տեղի ունեցավ տարածաշրջանային հանդիպում՝ ծրագրի անձնակազմի և հիմնական շահագրգիռ կողմերի միջև: Հանդիպման ընթացքում գործընկեր կազմակերպությունների կողմից ներկայացվեցին ծրագրի 2013թ. ձեռքբերումները և 2014 թ. պլանավորված գործողությունները:

Դեկտեմբերին նույնպես տարածաշրջանային հանդիպում տեղի ունեցավ Թբիլիսիում Վրաստանում՝ քննարկելու ծրագրի շրջանակներում պլանավորված տարածաշրջանային գնահատման մեթոդաբանությունը և համաձայնեցնելու ժամանակահատվածը: Դեկտեմբեր ամսին գնահատումն իրականացվեց Հայաստանում՝ Ավստրիական Կարմիր խաչի ընկերության կողմից ընտրված փորձագետի կողմից:

«Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի իրագործման ընթացքում դոնորների կողմից իրականացվել են մի շարք այցեր և հանդիպումներ, որոնցից կարելի է առանձնացնել Ավստրիայի զարգացման գործակալության գլխավոր տնօրեն Մարտին Լեդոլտերի այցը, որը ժամանել էր ծանոթանալու ծրագրի

organized for four CTs with Lori regional Rescue Service of RA Ministry of Emergency Situations and "LORE" Rescue Service. Moreover, before simulation exercises, special rescue equipments and uniforms were distributed to 2 new CTs.

ToT was organized for 80 teachers from 14 targeted schools of targeted Vahagni and Koghes communities, Vanadzor and Stepanavan, as well as Yerevan cities. First Aid, DRR related issues, Climate Change etc. were included in the agenda. Then, the trained teachers organized similar trainings with all pupils of their schools, as well as distributed Family Emergency Plan checklist for developing own realistic Family Emergency Plans with their family members, based on which competitions were organized in targeted schools. Also, drawing competitions were organized in each of 14 targeted schools where the best three drawings were awarded with incentive prizes. Moreover, based on the best drawings, calendar for 2015 year was printed. Educational materials on DRR, Climate change etc. has been printed and distributed to targeted schools.

To ensure school safety level all targeted schools' evacuation schemes were revised with military instructors and they were distributed with evacuation signs which is also one step forward to be more secured. During reporting period MoU was signed with Municipalities of Darpas and Kurtan communities on supporting and implementation of prioritized mitigation projects. Further, mitigation projects have been started in Kurtan and Darpas communities. For Kurtan community 800 m drinking water system was renovated, where pipelines were provided by ARCS and the rest of the work has been conducted by local authorities and with small in-kind contribution by World Vision Armenia. In Darpas community 327 m mudflow channel was renovated, where ARCS had 10% contribution. ARCS team monitored the process.

In February regional meeting was organized in Bakuriani, Georgia, for programme staff and key stakeholders. During the meeting Project partners presented their achievements in a framework of the project for 2013 year and planned activities for 2014. Also, in December regional meeting was organized in Tbilisi, Georgia aiming to present planned Project's regional evaluation methodology and agree on timing. In December, Armenian part of evaluation was conducted by external expert hired by Austrian Red Cross.

During the implementation of the "Building safe and resilient communities" project implementation, number of visits and meeting have been initiated by the donors. On 24 September, Martin Ledolter, General Director of Austrian Development Agency was in Stepanavan with the monitoring visit. Mr. Ledolter attended the






Deutsches
Rotes
Kreuz
Տեղեկատվություն

ընթացքին: Պարոն Մ. Լեդոլտերը ներկա գտնվեց Լոռու մարզի 4 գյուղական համայնքներում հիմնված համայնքային կամավորական թիմերի ուսումնական վարժանքին: Այնուհետև, ծրագրի ընթացքն ու արդյունքները քննարկելու համար Մ. Լեդոլտերը հանդիպեց Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի հետ: Լոռու մարզպետը շնորհակալություն հայտնեց Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված այս ծրագիրն իրականացնելու համար՝ նշելով, թե որքան կարևոր է այն մարզի համար:
ՀԿԽԸ աշխատանքը բարձր գանահատեց նաև պրն. Մ. Լեդոլտերը, նշելով, որ և այս, և իրենց կողմից ֆինանսավորվող մյուս ծրագրերն իրականացվում են հաջողությամբ և մեծ արդյունավետությամբ:
Նա նաև շնորհակալություն հայտնեց մարզպետին և համապատասխան կառույցներին համագործակցության համար՝ գնահատելով այն կարևորությունը, որ տրվում է մարզում իրականացվող այս ծրագրին:
Բոլոր կողմերն էլ նշեցին ԱՌՆ ծրագրերի կարևորությունն ու նշանակությունը ՀՀ աղետներից խոցելի մարզերում:

## Կառուցենք կայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում. III փուլ

2014 թ. մայիսին Ազգային ընկերությունն սկսեց իրականացնել «Կառուցենք կայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի III փուլը, որն իրականացվում է Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (DIPECHO), Դանիական, Իսլանդական, Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունների համաֆինանսավորմամբ և ԿԽ և ԿՄ ՄՖ-ի հետ համագործակցությամբ: Ծրագրի երկրորդ փուլի թիրախ հանդիսացող ՀՀ Շիրակի մարզի 14 համայնքներին և 65 դպրոցներին ավելացան ևս չորս համայնք և 21 դպրոց: Ծրագրում ընդգրկված շահառուներն են մոտ 23.000 դպրոցականներ և նրանց հարազատները՝ թվով մոտ 69.000 մարդ, ինչպես նաև 18 գյուղական համայնքներից՝ 32.900 բնակիչ:
Հաշվետու տարում ՀԿԽԸ, ՕՔՍՖԱՄ ՄԲ, ՅՈՒՆԻՍԵՖ, «Սեյվ դը չիլդրեն» հայաստանյան գրասենյակը և ԱՌՆ ազգային պլատֆորմը համատեղ կազմակերպեցին ծրագրի մեկնարկային հանդիպումը: Հանդիպման ընթացքում ԱԿ/ԲՏ բաժնի ղեկավարը ներկայացրեց ծրագրի առաջին և երկրորդ փուլերի ձեռքբերումները, նորարությունները, ինչպես նաև ծրագրի երրորդ փուլի գործողությունները:
Չորս նոր համայնքներում Խոցելիության և կարողությունների գնահատում (ԽԿԳ) իրականացվեց, ինչպես նաև 14 առկա համայնքներում հանդիպումներ տեղի ունեցան՝ թարմացնելու արդեն իրականացված ԽԿԳ տվյալները: Ընդհանուր առմամբ 18 թիրախային համայնքներից 450 մարդ ներգրավվեց ԽԿԳ գործընթացում: Յուրաքանչյուր 18 համայնքում, հնարավոր կանխարգելման պլանների և ԽԿԳ զեկույցների արդյունքների ներկայացման և քննարկման նպատակով կազմակերպված ավարտական հանդիպումներից հետո, տպագրվեցին ԽԿԳ զեկույցները, որոնք ներառում էին համայնքի Աղետների նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլան:

training drill of community volunteer teams, which were established in 4 rural communities of Lori region. Then, for the discussion of the Project conducting process and results, Mr. Ledolter met with Arthur Nalbandyan, Lori region governor. Lori governor thanked ARCS for implementing disaster risk reduction project, noting how important it is for the region.
Mr. Ledolter highly appreciated the work done by ARCS and indicated that in both this and other projects funded by them are being implemented with great success and effectiveness.
He also thanked the governor and the relevant structures for cooperation, appreciating the importance that is given to this project implemented in the region.
All the sides stressed the importance of DRR projects in the disaster - prone regions of RA.

## Building resilient local communities in Georgia and Armenia: III phase

From May, 2014 NS started implementation of “Building Resilient Local Communities in Georgia and Armenia” project’s III phase. The project is co-funded by the European Commission’s Humanitarian aid and Civil Protection Directorate General (DIPECHO), Danish, Icelandic and Austrian Red Cross Societies in a consortium with the International Federation of Red Cross and Red Crescent Societies. Four new communities and 21 new schools were added to already target fourteen communities and 65 schools. Thus, the beneficiaries of the project are approximately 23.000 schoolchildren and their relatives, about 69.000 persons, as well as 32 900 inhabitants of the eighteen rural communities.
During the reporting period Armenian Red Cross Society, OXFAM GB Armenia, UNICEF, “Save the Children” and National DRR Platform have jointly launched DIPECHO programme 3rd phase, where the Head of ARCS DM and PM department presented the achievements based on the previous experience and innovations of DIPECHO project’s 1st and 2nd phases as well as the activities which will be implemented within 3rd phase.
VCA was conducted in 4 new communities, as well as meetings were organized in 14 previous communities for updating already implemented VCA results. Overall 450 people were involved from 18 targeted communities in the VCA process. VCA reports including community Disaster Preparedness and Mitigation Plan of Action were printed, after conducting final meetings in each of 18 communities for presenting and discussing VCA results and possible mitigation actions.

«Աղետների ռիսկի կառավարում», «Կխ/ԿՄ շարժման լուսաբանում», «Կխ/ԿՄ ՄՖ աղետներին արձագանքման գործիքները/մեխանիզմները», «Սոցիալ-հոգեբանական աջակցություն» և «Փրկարար հիմունքներ և Առաջին օգնություն» խորագրերով դասընթացներ/թարմացման դասընթացներ կազմակերպվեցին նոր և արդեն առկա համայնքային խմբերի համար (ՆՀԽ):
Ավելի քան 360 Համայնքային խմբի անդամներ մասնակցեցին դասընթացներին:
Ազգային ընկերությունը, Շիրակի մարզային փրկարար ծառայության հետ համատեղ, կազմակերպեց դաշտային ուսումնավարժանքներ 18 Հխ-երի 360 անդամների մասնակցությամբ: Նրանց տրամադրվեց նաև հատուկ փրկարարական գույք և հագուստ:
6 թիրախային համայնքներին տրամադրվել է անհատական հատուկ գույք՝ առատ ձյան պայմաններում աշխատելու համար, ինչպես նաև բոլոր Համայնքային խմբերն ստացել են հակահրդեհային սարքավորումներ: Երեք Հխ-եր մասնակցեցին Մարզային փրկարար ծառայության կողմից կազմակերպված պետական մակարդակում անցկացվող ԱՌՆ վարժանքներին, որտեղ Հխ-երը ունեին հատուկ դեր և պարտականություններ: Հարկ է նշել նաև՝ հաշվետու ժամանակահատվածում բոլոր 18 Հխ-երը միասին արձագանքել են տեղական մակարդակում տեղի ունեցած 31 արտակարգ պատահարների:
Շիրակի մարզում հանդիպում տեղի ունեցավ Մանթաշի ամբարտակի ջրհեղեղավտանգ գոտում թիրախային վեց համայնքների համայնքապետերի հետ՝ քննարկելու Վաղ ազդարարման համակարգի մշակման գործընթացը:
Շիրակի մարզում կազմակերպվեց մարզային համակարգման հանձնաժողովի հանդիպում 18 համայնքների ղեկավարների, մարզային իշխանությունների և ծրագրի անձնակազմի մասնակցությամբ՝ ներկայացնելու ծրագրի առաջին և երկրորդ փուլերի ձեռքբերումները, քաղած դասերը և լավագույն փորձը, ինչպես նաև ծրագրի երրորդ փուլի գործողությունները:
Հաշվետու տարում «Սոցիալ-հոգեբանական աջակցություն» և «Կլիմայի փոփոխության հարմարվողականություն» խորագրով երկու տարածաշրջանային թարմացման դասընթաց իրականացվեց Հայաստանում, որն անցկացվեց համապատասխան՝ Իսլանդական, Վրացական, Հայկական Կարմիր խաչերի, Պաղեստինի Կարմիր մահիկի ընկերությունների և Ավստրիական Կարմիր խաչի ներկայացուցիչների կողմից՝ Հայաստանի և Վրաստանի Կարմիր խաչի անձնակազմի և կամավորների համար:
Երեք օրանոց դասընթացներ կազմակերպվեցին Շիրակի մարզի 21 դպրոցների 40 ուսուցիչների, ինչպես նաև՝ թարմացման դասընթացներ, առկա 65 դպրոցների 230 ուսուցիչների համար՝ Աղետների ռիսկի նվազեցման, Առաջին օգնության և կլիմայի փոփոխության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերման/ամրապնդման նպատակով: Մշակվեց և տպագրվեց նաև ուսուցողական նյութ՝ «Անվտանգ ընտանիք» խորագրով, ինչպես նաև ուսուցիչների համար երկու ձեռնարկ, որոնք տրամադրվեցին թիրախային 86 դպրոցներին և 18 համայնքներին: Հետագայում, ուսուցում ստացած ուսուցիչները, հիմնվելով հատուկ մեթոդաբանության և տրամադրված ձեռնարկի վրա, իրենց աշակերտների համար կազմակերպեցին նմանատիպ դասընթացներ, ինչպես նաև բաժանեցին «Աղետի ընտանեկան պլան» թերթիկ-ուղեցույցը՝ իրենց

Also, trainings/refreshments titled “Disaster Risk Management“, “RC/RC Movement dissemination” and “IFRC Disaster Response tools/mechanisms”, “Psycho-social support”, “Basic Rescue” and “First Aid” have been conducted for new and old Community Volunteer Groups (CVG).
Over 360 CVG members participated in the trainings. After, simulation drills were organized jointly with Shirak Regional Rescue Service for 18 CVGs (360 members). Moreover, Personal protective equipment, tools and uniforms have been distributed to CVGs. It is worth to highlight that 6 targeted communities were provided with special equipment for operations during hard snow which is typical for their area, as well as all CVGs received fire protection equipment. Also, three CVGs participated at the state simulation drill organized by Regional Rescue Service having certain role and responsibilities. It is worth to mention, that during reporting period, all 18 CVGs in total have made 31 local emergency responses. During the reporting period, a meeting was organized in Shirak region with participation of heads of 6 targeted communities located in a flood prone/downstream area of Mantash dam to discuss the development of Early warning system for communities.
In order to present the Project’s achievements, lessons learned and best practices from last two phases, as well as the Project’s III phase activities Regional Coordination meeting was organized in Shirak region with the participation of heads of 18 targeted communities, regional authorities, project staff etc.
Within the reporting period two regional trainings titled “Psycho Social Support and Children Resilience program” facilitated by Icelandic, Palestinian, Georgia and Armenian RCs and “Climate Change Adaptation and Livelihood Protection” facilitated by Austrian Red Cross were organized in Armenia for Armenian and Georgian Red Cross staff, volunteers and relevant stakeholders.
In order to gain/remember knowledge on DRR, First aid, and climate change, etc. three day training for 40 teachers from new 21 targeted schools as well as one day refreshment training for 230 teachers from 65beneficiary schools of Shirak region have been organized.
After, “Family Safety” manual, assigned for all 23.000 pupils, and two handbooks for teachers, which was developed within the framework of the project, were distributed to targeted 86 schools. Trained teachers, according to the methodology and special handbooks that had been given to them, organized local DRR trainings with pupils of their schools. Later, pupils based on Family Emergency Plan checklist opened discussions in their families on disaster risks and preparedness for developing their Family

ընտանիքի անդամների հետ ընտանեկան պլան մշակելու համար: Որպես առաջին փուլ 86 դպրոցներում կազմակերպվեցին մրցույթներ, որից հետո յուրաքանչյուր դպրոցից ընտրվեցին երեք լավագույնները և պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով: Ավելին, լավագույն պլանները կմասնակցեն երկրորդ փուլին՝մարզային մակարդակում անցկացվող մրցույթին: Գյումրիում նույնպես անցկացվեց ԱՌՆ միջազգային օրվան նվիրված նկարչական մրցույթ, որին մասնակցեցին Գյումրու 4 դպրոցների 12 դասարաններից 380 աշակերտ: Մրցույթին հաջորդեց լավագույն նկարների հիման վրա կազմակերպված ցուցահանդեսը, որտեղ ընտրված լավագույն նկարները տեղ գտան 2015 թ.-ի օրացույցում: Ավելին, դպրոցների անվտանգությունը ապահովելու համար թիրախային 86 դպրոցներին տրամադրվեցին հակահրդեհային վահանակներ և կրակմարիչներ, իսկ 4 դպրոցներին՝ տարհանման նշաններ:
Արտակարգ իրավիճակների ժամանակ ՀԽ-երին մոբիլիզացնելու և Արտակարգ իրավիճակների մարզային պլանում, ինչպես նաև պետական մակարդակում անցկացվող վարժանքներին և միջոցառումներին նրանց ներգրավվումը ապահովելու նպատակով փոխըմբռնման հուշագիր կազմվեց Շիրակի մարզի փրկարար ծառայության, մարզպետարանի, տեղական իշխանությունների և ՀԿԽԸ-ի կողմից, որտեղ հստակեցվեցին նրանց դերերը և պատասխանատվությունները՝ ՀԽ-ների պահպանման և հետագա զարգացման համար: Հուշագիրը կստորագրվի 2015 թ.-ի սկզբին:
Մի քանի համակարգման հանդիպումներ անցկացվեցին ՀԿԽԸ, ՕՔՍՖԱՄ ՄԲ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP), «Փրկենք երեխաներին» Հայաստանյան գրասենյակի և ԱՌՆ ազգային պլատֆորմի միջև՝ քննարկելու ծրագրի շրջանակներում հնարավոր համագործակցությունը, ինչպես նաև Պլատֆորմի կարողությունների զարգացման գործընթացը:

Նոյեմբերի 6-ին և 7-ին Իսլանդիայում կայացավ ԱՌՆ Ղեկավար հանձնաժողովի առաջին հանդիպումը: Այն բաղկացած էր ծրագրի երրորդ փուլին աջակցող Կարմիր խաչի և ծրագիրն իրականացնող Ազգային ընկերությունների ներկայացուցիչներից: Ավելին, մինչ Ղեկավար հանձնաժողովի հանդիպումը, մի քանի հանդիպումներ տեղի ունեցան Իսլանդիայում տարբեր պետական և ոչ-պետական շահագրգիռ կողմերի հետ: Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ աղետների նվազեցման պետական և կամավոր կառուցվածքը և Կարմիր խաչի դերը այդ համակարգում: Հարկ է նշել նաև՝ՀՀ Տարածքային կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի ղեկավարը նույնպես մասնակցեց հանդիպումներին:

### Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում

2014թ. Ազգային ընկերությունը շարունակել է իրականացնել «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագիրը՝ Ավստրիայի զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի ընկերության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել սիրիահայերի կենսապայմանների բարելավմանը Հայաստանում: Ծրագիրն ունի երկու ուղղություն՝ հոգալ սիրիահայերի առօրյա և երկարաժամկետ կարիքները:

Emergency Plans. As a first phase, in-school competition has been organized in each school and 3 best plans from each targeted 86 schools were selected and awarded with incentive prizes. After, the best plans were presented to the second phase/regional level competition. Also, Drawing Competition dedicated to International Disaster Risk Reduction (IDRR) Day was organized in Gyumri. Over 380 pupils from 12 classes of 4 schools of Gyumri participated at the competition. In November, it was followed by exhibition organized based on the best Drawings which were later included in the Project Calendar for 2015. Moreover, to ensure targeted schools' safeness, Fire Protection equipments (fire distinguishers and fire panels) were distributed to 86 schools and evacuation signs to 4 schools, that haven't received before.
To ensure the mobilization of the CVGs in case of emergency, their involvement in regional Emergency Situation Plan and all state simulations and events, MoUs has been developed which states certain roles and responsibilities of Shirak Rescue Service-Regional Hall-Local Authorities-ARCS for maintaining and further developing CVGs. It is planned to be signed in early 2015.
Several coordination meetings were held with the participation of ARCS, OXFAM, UNICEF, UNDP, Save the Children and National DRR Platform for discussing DIPECHO project synergies and joint actions as well as agreeing on the Platform capacity building approach. It was decided and agreed that every organization should support the process.
On the 6th and 7th of November the first DRR III Steering Committee Meeting was held in Iceland. The Steering Committee was composed of representatives of the Red Cross Consortium supporting DRR III and representatives of the implementing national societies. Moreover, the field study prior to Steering Committee meeting have been organized in Iceland during which different meetings with state and non-state stakeholders took place. The meetings helped to clearly define the state and voluntary DR structures and the role/place of Red Cross within the system. It is worth to mention that the Head of Crisis Coordination Center of the Ministry of Emergency Situations of Armenia have also taken part at the field trip.

### Relief and empowerment for Syrian Armenians

NS continued implementation of "Relief and Empowerment for Syrian Armenians" project with the financial support of Austrian Development Agency and Austrian Red Cross Society. The main objective of the project was to contribute in enhancing livelihood conditions of Syrian Armenians in Armenia. The project had two




ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄ

Ծրագրում ներգրավված է 300 շահառու սիրիահայ ընտանիք՝ 1668 մարդ: Ծրագրի առաջին ուղղության շրջանակներում շահառու 300 սիրիահայ ընտանիքներին տրամադրվել են հիգիենիկ պարագաների կապոցներ՝ վեց ամսվա համար, ձմեռային հագուստ և կոշիկ գնելու քարտեր և կենցաղային իրեր (յուրաքանչյուր ընտանիքին՝ մեկ կապոց): Ինչպես նաև քրոնիկ հիվանդություններ ունեցող 70 շահառուներին (ասթմա, շաքարախտ, սրտի խնդիր և այլն) տրամադրվել է դեղորայք՝ յոթ ամսվա համար նախատեսված: Ծրագրի երկրորդ ուղղության շրջանակներում 77 խոցելի ընտանիքներին տրամադրվել են սարքավորումներ/գործիքներ սեփական փոքր բիզնես սկսելու համար: Մինչ սարքավորումների տրամադրումը, ընտրված շահառուների համար կազմակերպվել են բիզնեսի վերապատրաստման դասընթացներ: Ավելին, սարքավորումներ ստացած շահառուները մասնակցեցին ազգային ընկերության կողմից կազմակերպված ցուցահանդես-տոնավաճառին, որտեղ ներկայացրեցին իրենց արտադրանքն ու հմտությունները: ՀԿԽԸ-ն բոլոր մասնակից սիրիահայերին տրամադրեց այցեքարտեր՝ բիզնեսի զարգացմանը նպաստելու համար: Նախաձեռնությունը հնարավորություն տվեց սիրիահայերին ընդլայնելու իրենց գործունեությունը: Ծրագիրն իրականացվել է՝ սերտորեն համագործակցելով ՀՀ Սփյուռքի նախարարության, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:

### Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում. II փուլ

2014թ. մայիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում Ազգային ընկերությունն սկսեց իրականացնել «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագրի երկրորդ փուլը Գերմանական, Ֆրանսիական և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունների ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել սիրիահայերի կենսապայմանների բարելավմանը Հայաստանում: Ծրագիրը շարունակվեց երկու ուղղությամբ՝ հոգալ սիրիահայերի առօրյա և երկարաժամկետ կարիքները: Ծրագրում ներգրավված է 150 շահառու սիրիահայ ընտանիք՝ 620 մարդ: Առաջին ուղղության շրջանակներում 150 սիրիահայ ընտանիքների տրամադրվել են սննդի կապոցներ՝ նախատեսված երեք ամսվա համար, հիգիենիկ պարագաների կապոցներ՝ վեց ամսվա համար, երեխաների համար ձմեռային հագուստ և կոշիկ գնելու համար քարտեր, դպրոցական պարագաների համար նախատեսված գումար: Ինչպես նաև 35 քրոնիկ հիվանդություններ ունեցող շահառուներին (ասթմա, շաքարախտ, սրտի խնդիր և այլն) տրամադրվել է դեղորայք: Ծրագրի երկրորդ ուղղության շրջանակներում խոցելի 28 ընտանիքներին տրամադրվել են սարքավորումներ/գործիքներ սեփական փոքր բիզնես սկսելու համար: Մինչ սարքավորումների տրամադրումը, ընտրված շահառուների համար կազմակերպվեցին բիզնեսի վերապատրաստման դասընթացներ: Ավելին, տարվա վերջին ԱԸ ՀՀ Սփյուռքի նախարարության և Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի հետ համատեղ կառավարության ընդունելությունների տանը կազմակերպեց «Սիրիահայ

directions; to address humanitarian and long-term needs of Syrian Armenians. The beneficiaries of the project are 300 Syrian Armenian families, overall 1668 people. Within the first direction 300 Syrian Armenian families have been provided with Hygiene parcels for 6 months, vouchers for purchasing winter clothes/shoes and household items (each family one parcel). As well as 70 beneficiaries with chronic diseases (e.g. asthma, diabetes, heart problems) have been provided with medication for 7 months. Also, within the framework of the second direction 77 vulnerable families have been supported with equipments/tools to build up their livelihood and generate their own income. Before providing equipments/tools, business start up training was organized for them. Furthermore, beneficiaries who assisted with Income generation tools/equipments participated in fair-exhibition organized by the NS. They presented their products and skills. The ARCS provided all Syrian Armenians involved in the fair with business cards for promoting their business. Due to the event, Syrian Armenians had an opportunity to enlarge their small businesses. The project is implemented in close cooperation with the RA Ministry of Diaspora, “Center for Coordination of Syrian Armenians’ Issues” NGO and RA Ministry of Labor and Social Issues.

### Relief and Empowerment for Syrian Armenians: II phase

From May till December, 2014 NS started implementation of “Relief and Empowerment for Syrian Armenians” project’s II phase with the financial support of German, French and Austrian Red Cross Societies. The main objective of the project was to contribute in enhancing livelihood conditions of Syrian Armenians in Armenia. The project continued with same two directions; to address humanitarian and long-term needs of Syrian Armenians. The beneficiaries of the project were 150 Syrian Armenian families, overall 620 people. Within the framework of the first direction of the project 150 Syrian Armenian families have been provided with food parcels for three months, hygiene parcels for 6 months, vouchers for purchasing winter clothes/shoes for children and school enrollment assistance in cash. As well as 35 beneficiaries with chronic diseases (e.g. asthma, diabetes and heart problems) have been provided with medication. Within the framework of the second direction, 28 vulnerable families have been supported with equipments/tools to build up their livelihood and generate their own income. Before providing equipments/tools, business start up training was organized for them. Moreover, in the end of the year Charity Fair titled “The Breath of Syrian-Armenian Culture in Yerevan” was organized jointly with RA Ministry of Diaspora and the Center for Coordination of Syrian-Armenians’ Issues NGO at the

մշակույթի շունչը Երևանում» բարեգործական տոնավաճառ: Սիրիահայ շահառուները, որոնք եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով օգնություն էին ստացել ՀԿԽԸ-ից, մասնակցեցին տոնավաճառին: ՀԿԽԸ-ն բոլոր մասնակից սիրիահայերին տրամադրեց այցեքարտեր՝ բիզնեսի հետագա զարգացմանը նպաստելու: Ըստ սիրիահայերի՝ տոնավաճառը արդյունավետ էր. նրանք կարողացել են վաճառել իրենց արտադրանքը:

## Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում. III փուլ

2014թ. Ազգային ընկերությունը շարունակեց իրականացնել «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագրի երրորդ փուլը՝ Ավստրիայի զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի ընկերության ֆինանսավորմամբ: Ծրագիրը մեկնարկել է 2014թ. նոյեմբեր ամսին և ավարտվելու է 2015 թ.-ի հունիսին: Հաշվետու տարում 300 սիրիահայ ընտանիքի տրամադրվել են երեք ամսվա համար նախատեսված սննդի պարագաների կապոցներ:

## Կլիմայի արևելյան հարթակ

2014 թ. ընթացքում ՀԿԽԸ-ն շարունակել է իրականացնել «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից, իսկ լրացուցիչ ֆինանսավորում տրամադրվում է Ավստրիական զարգացման գործակալության, Ավստրիական Կարմիր խաչի և Վայրի Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել կլիմայի փոփոխության ոլորտի քաղաքականության մշակման գործընթացին, Արևելյան Գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության զարգացմանը, ինչպես նաև զարգացնել Արևելյան Գործընկերության քաղաքական գերակայությունները բնապահպանության կառավարման և կլիմայի փոփոխության ոլորտներում:
Ծրագրի շրջանակներում իրականացվեց և հանրությանը ներկայացվեց Կլիմայի խոցելիության գնահատումը, որն իր մեջ էր ներառում Կլիմայի Հայկական հարթակի անդամ կազմակերպությունների կողմից նախապատրաստած նպատակային ուսումնասիրություններ:
Որպես նախորդ տարվա ընթացքում իրականացված նկարչական մրցույթի արդյունք՝ Վայոց Ձորի մարզի երեխաների համար կազմակերպվեց այց Երևան: Վայոց Ձորի դպրոցների Նկարչական մրցույթում հաղթող 3 դասարաններ այցելեցին Երևան: 54 դպրոցական և 24 ծնող/ ուսուցիչ մասնակցեցին միջոցառմանը: Երեխաների խումբն այցելեց Բնության թանգարան և Երևանի Կենդանաբանական այգի:
Հայկական Կարմիր խաչի ընկերությունը և ՄԱԶԾ Հայաստանը, ՄԱԶԾ – Եվրամիության «Կլիմա Իսթ» պիլոտային ծրագրի և ՀԿԽԸ «Կլիմային արևելյան հարթակ» ծրագրի շրջանակներում, միավորվեցին կազմակերպելու երկօրյա դասընթաց կլիմայի փոփոխությանն առնչվող խնդիրների և լրատվամիջոցներում դրանց լուսաբանման վերաբերյալ: Ավելի քան 15 լրագրող, որոնք ներկայացնում են կենտրոնական և մարզային լրատվամիջոցներ Երևանից, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերից ընդլայնեցին իրենց գիտելիքները Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի վերաբերյալ՝ օրինակ կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում, կլիմայի փոփոխության մեղմացումն ու հարմարվողականությունը, կլիմայի փոփոխությանը վերաբերվող հաճախ օգտագործվող հասկացությունները և այլն: Ֆիլմի դիտումը, խմբային աշխատանքները և ներկայացումները ընդգրկում

lobby of the large session's hall of the Government of the Republic of Armenia. Beneficiaries who have received IG assistance from ARCS so far participated in the Fair. The ARCS provided all Syrian Armenians involved in the fair with business cards for promoting their business. According to Syrian Armenians the Fair was profitable and they managed to sell their products.

## Relief and Empowerment for Syrian Armenians. III phase

NS continued implementation of "Relief and Empowerment for Syrian Armenians" project's III phase by the financial support of Austrian Development Agency and Austrian Red Cross Society from November, 2014 to June, 2015. 300 Syrian Armenian families are involved in the project. Within the reporting year vulnerable 300 families have been provided with food parcels for three months.

## Climate Forum East

In 2014, the Armenian Red Cross Society has continued implementation of "Climate Forum East Project" financed by the EU and co-funded by the Austrian Development Agency, Austrian Red Cross and World Wild Fund for Nature (WWF). The main objectives of the Project is to contribute to global policy making processes in Climate Change, to Civil Society Development in Eastern partnership (EaP) countries, to advance EaP political priorities in the area of environment governance and climate change.

Within the framework of the Project, Climate Vulnerability Assessment which included Case studies developed by the Armenian Climate Forum member organizations have been developed and presented to the audience.
Moreover, as a result of last year Drawing competition, a trip to Yerevan for kids from Vayots Dzor region has been organized. Three classes from Vayots Dzor secondary schools, winners of Drawing competition, have been invited to visit Yerevan. 54 kids and 24 parents/ teachers have participated in the event. The group from Vayots Dzor has visited the State Museum of Nature of Armenia and the Yerevan Zoo.
Furthermore, two days training for Journalists on "Media coverage of Climate Change challenges" has been organized. Armenian Red Cross Society and UNDP Armenia teamed up to organize a two day training on climate change related challenges and their coverage by media in Yerevan in the scope of the UNDP-EU "Clima East Pilot Project" and ARCS "Climate Forum East Project". Some 15 journalists representing republican and regional mass media from Yerevan, Gegharkunik and Vayots Dzor regions of Armenia enhanced their knowledge on climate change and environmental challenges, such as climate change impacts in Armenia, climate change mitigation and adaptation, frequently used concepts and


RADOSLAW RZEHAK
FILARET BERIKYAN
SING
ANNA YEGHIAZARYAN





էին կլիմայի փոփոխության և դրա ազդեցությանը վերաբերվող տարբեր խնդիրներ՝ ինչպիսիք են գլոբալ տաքացումը, ծայրահեղ կլիմայական երևույթներ, ջրային պաշարների խոցելիությունը, անտառների և գյուղատնտեսության խոցելիությունը:
Որպես շարունակություն՝ Կլիմայի հայկական հարթակի անդամ կազմակերպությունների համար կազմակերպվեց «Հաղորդակցությունը և շահերի պաշտպանությունը» թեմայով երկօրյա դասընթաց, որտեղ դասընթացի հիմնական թեմաներից էին շահերի պաշտպանության արշավ կազմակերպելու համար կարողությունները և մեթոդները, ԶԼՄ-ների հետ աշխատանքի հիմնական հմտությունները, հաղորդակցման և ԶԼՄ-ների գործիքների օգտագործումը և այլն: Արդյունքում, 2014 թվականի վերջին մշակվեց Կլիմայի հայկական հարթակի Շահերի պաշտպանության ռազմավարությունը:
Այդ ամենի հետ մեկտեղ կազմակերպվեց դասընթաց Արմավիրի մարզի 12 դպրոցների ուսուցիչների համար: Ընդհանուր առմամբ 24 ուսուցիչ 12 դպրոցներից (2 ուսուցիչ յուրաքանչյուր դպրոցից) մասնակցեցին դասընթացին: Նրանք ստացան Կլիմայի փոփոխության ներկայիս զարգացումների վերաբերյալ հիմնական գիտելիքներ: Դասընթացին հաջորդեցին դպրոցներում ուսուցիչների կողմից կազմակերպված դասընթացները, որի ընթացքում աշակերտները նախապատրաստվեցին մասնակցելու նկարչական մրցույթին: Արդյունքում 12 դպրոցներից ընտրվեց 36 նկար, որոնք տեղ գտան ծրագրի շրջանակներում տպագրված 2015թ. օրացույցում: Օրացույցները բաշխվեցին համապատասխան կազմակերպությունների, գործակալությունների և կառույցների միջև:
Ի վերջո, «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագիրը տեղեկագրերի, ԿԽԳ և բուկլետների հետ մեկտեղ ներկայացվեց Պերուի մայրաքաղաք Լիմայում տեղի ունեցած ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակներում կայացած կոնֆերանսին:

### Հայաստան. եղանակային ծայրահեղ պայմաններ

2013թ. դեկտեմբեր և 2014թ. հունվար ամիսներին, հաշվի առնելով եղանակային ցուրտ պայմանները, ՀԿԽԸ-ն դիմեց ԿԽԿՄ ՄՖ Արտակարգ հիմնադրամին՝ աջակցելու Ազգային ընկերությանը, ձմռան ծայրահեղ ցրտին դիմակայելու նպատակով սիրիացի փախստականների հիմնական կարիքներին արձագանքելու և 980 շահառուների համար օգնություն տրամադրելու համար: Գործունեության արդյունքում շահառուներին տրամադրվեց տաք հագուստ և կոշիկներ, ծածկոցներ (յուրաքանչյուր ընտանիքին չորս հատ), ինչպես նաև հիգիենիկ և սանիտարական պարագաներ՝ ծայրահեղ ցրտի պայմաններում խոցելի բնակչության դիմակայունության բարձրացման և նվազագույն կենսական պայմաններ ապահովելու նպատակով: Տաք հագուստի և կոշիկների բաշխումը իրականացվեց նվեր – քարտերի միջոցով:
Ծրագրում ներգրավված ՀԿԽԸ աշխատակազմը մշակեց շահառուների ընտրության չափորոշիչները և ցուցակը: Հետագայում ցուցակը ստուգվեց համապատասխան շահագրգիռ կողմերի հետ՝ այն ավելի արդյունավետ դարձնելու և սխալ տեղեկությունները բացահայտելու նպատակով:
Բոլոր գործողություններն իրականացվել են ԿԽԿՄ ՄՖ երևանյան գրասենյակի հետ սերտ համագործակցությամբ: Ծրագրի իրականացման ընթացքում ապահովվեց ՀԿԽԸ գործունեության տեսանելիությունը՝ օգտագործելով ծրագրի ցուցատախտակը, բաճկոնները, ծանրոցների վրա ԿԽԿՄ ՄՖ և ՀԿԽԸ խորհրդանիշերը: Գործունեությանն առնչվող տեղեկությունները տեղադրվել են առցանց լրատվամիջոցներում, թերթերում և ՀԿԽԸ կայքում:

terms on climate change etc. Film watching, group works and prepared presentations covered variety of issues related to the CC and its impact, for instance global warming, extreme climate events, water resources vulnerability, forests vulnerability and agriculture vulnerability.
As a continuation, two days training on “Communication and Advocacy” for the Armenian Climate Forum member organizations was organized where resources and methods for organizing advocacy campaigns, basic skills in working with Media representative, using media and communication tools etc. have been among the main topics of this training. As a result, Advocacy Strategy of the Armenian Climate Forum has been developed at the end of the year.
Following this events, training for teachers in 12 schools of Armavir region has been organized. Overall, 24 teachers from 12 schools (2 teachers from each school) have participated in the event. They have received basic knowledge on current trends related to Climate change. Following the training, teachers organized classes on Climate Change for pupils thus preparing them to participate in a Drawing competition. As a result, 36 pictures from 12 schools have been selected and published in the 2015 Calendar printed within the framework of the Project and distributed all over relevant institutions, agencies and organizations throughout the country.
Finally, the “Climate Forum East Project” was presented at the UNFCC Conference in Lima Peru, along with newsletters, CVAs and booklets.

### Armenia: extreme weather conditions

Due to the harsh weather conditions in December 2013 – January 2014, ARCS has applied to the Federation’s Disaster Relief Emergency Fund (DREF) to support the National Society in responding to basic needs of Syrian refugees during extreme winter by delivering assistance to 980 beneficiaries. Under the operation, provision of warm clothes and shoes and blankets (four for each family) to withstand cold weather, as well as hygiene and sanitary items to insure minimum living conditions was done to increase the resilience of the vulnerable population affected by the extreme winter conditions. The distribution of warm clothes and shoes has been done through the provision of vouchers.
ARCS staff involved in DREF Operation has set up a criteria for selection and the list of beneficiaries. The list was afterwards cross checked with relevant stakeholders to identify any misinformation and make it more efficient.
All activities have been processed in close collaboration with the IFRC Yerevan Office. Visibility of the work of the ARCS was ensured during the operation through using visibility items (project banner, jackets and IFRC and ARCS emblems stuck on parcels). Operation-related articles and news have been posted on online-media, newspapers and the ARCS website.

## Ականներից և պատերազմի հետևանքով պայթուցիկ նյութերի մնացորդներից (ՊՀՊՆՄ) զոհերի, տուժածների և նրանց կարիքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում

2014թ. հունվարից Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է «Ականներից և ՊՀՊՆՄ զոհերի, տուժածների և նրանց կարիքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից: Այն իրականացվել է 01.01.2014 – 31.12.2014թթ.՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Ծրագրի հիմնական նպատակն է հավաքագրել, կենտրոնացնել և վերլուծել ականներից տուժածների տվյալները և կարիքները՝ տեղեկատվական կառավարման համակարգի (IMSMA) միջոցով և հասանելի դարձնել շահագրգիռ կողմերին:
Կառավարությանն օժանդակելու ՀԿԽԸ դերից բացի, ծրագիրը թույլ կտա հոգալ ականներից տուժածների կարիքները և խթանել նրանց սոցիալ-հոգեբանական վերաինտեգրումը հասարակության մեջ:
Ծրագրի իրականացման արդյունքում, ավելի քան 400 տուժածներից և նրանց ընտանիքների անդամներից հատուկ համակարգով մշակված հարցաթերթիկների միջոցով հավաքագրվեց տեղեկատվություն, և իրականացվեց դրա որակական վերահսկումը: Ավելին, այդ գործընթացի հետ մեկտեղ ստացված տեղեկատվությունը մուտքագրվել է տեղեկատվական բազա (IMSMA):

## Լուսառատ գյուղի դպրոցի վերանորոգում

2013թ. նոյեմբերին Հայկական Կարմիր խաչի ընկերությունն սկսեց իրականացնել «Լուսառատ գյուղի դպրոցի վերանորոգում» ծրագիրը, որի նպատակն էր նվազեցնել խոցելիությունը համայնքում և ուժեղացնել դպրոցի կարողությունները: Ծրագիրը ֆինանսավորվել է Ճապոնիայի կառավարության կողմից:
Վերանորոգման և նոր կահույքի տրամադրման արդյունքում Լուսառատ գյուղի դպրոցում ապահովվեցին դասերի կազմակերպման ավելի հարմարավետ և ժամանակակից պայմաններ, ինչը ուղղակի ազդեցություն ունեցավ ուսման որակի և արդյունավետության վրա:
600 մ$^2$ տարածք՝ ներառյալ դասարանները, կահավորվեցին նոր կահույքով, շենքի ներսում կառուցվեց 5 նոր զուգարան, ապահովվեց ջրի և էլեկտրականության համակարգը:
Համայնքի ղեկավարությունը և դպրոցի տնօրինությունը պատասխանատվություն ստանձնեցին ծրագրի ավարտից հետո ապահովելու դպրոցի հետագա շահագործումը: Ավելին, ծրագրի սկզբից նրանք նաև ներգավված էին վերանորոգման աշխատանքներին և ունեցան իրենց ներդրումը՝ գրատախտակներ գնելով դպրոցի երկրորդ հարկի դասարանների համար: Այսպիսով, դպրոցի հետագա շահագործման պատասխանատվությունը լիովին ընկած է համայնքի ղեկավարության և դպրոցի տնօրինության վրա, սակայն միևնույն ժամանակ, ՀԿԽԸ-ն հետագայում կհամագործակցի դպրոցի հետ՝ փորձելով իր այլ ծրագրերի շրջանակներում իրականացնել տարբեր միջոցառումներ՝ դպրոցի հետ մշտական կապ ապահովելու և շահագործման մշտադիտարկումն իրականացնելու նպատակով: 2014թ. սեպտեմբերի 4-ին տեղի ունեցավ դպրոցի 2-րդ հարկի բացման պաշտոնական արարողությունը:

## Mines and explosive remnants of war(ERW) victims' casualty and needs data collection in Armenia

Starting from January 2014 ARCS has continued "Mines and Explosive Remnants of War (ERW) Victims' Casualty and Needs data Collection in Armenia" Project, financed by the International Committee of the Red Cross (ICRC). The implementation area of the Project is all Marzes of the Republic of Armenia and the city of Yerevan.
The main objective of the Project is to collect, systemize and analyze mine/ ERW victims' casualty and needs data through IMSMA (Information Management System for Mine action) and present it to the interested stakeholders.
As a result of the Project implementation in 2014, information about more than 400 victims and their family members through the specially developed questionnaire have been collected and quality control of filled questionnaires has been done. Additionally, along with this process, received information has been inputted into IMSMA Database.

## Renovation of the school in Lusarat village

In November 2013 the Armenian Red Cross Society has started implementation of "Renovation of the School in Lusarat Village" Project aimed at reducing social vulnerability of the community and strengthening capacities of the school. The Project was financed by the Japan Government.
As a result of renovation and provided new furniture, more comfortable and modern conditions for conducting classes in secondary school of Lusarat village has been ensured which had direct impact on the effectiveness and quality of education.
Overall, 600 square meters of school space in the second floor of the school with classrooms was renovated, equipped with new furniture, built five indoor toilets, as well as pour water system and electricity infrastructure have been provided.
The community authorities and the school administration have taken responsibility for further maintenance of the school after the project completion. Moreover, they have been involved in the renovation process from the beginning and had their contribution by purchasing new blackboards for renovated classrooms of second floor. Therefore, the responsibility of further maintenance of the school fully lays on community authorities and school administration but, meantime, ARCS will further cooperate with the school attempting to implement different events and campaigns within the framework of its other projects in order to ensure permanent contact with the school and monitor the maintenance and use from a side. On 4 September, 2014, offical opening ceremony of the school's second floor took place.

## ԱՌՆ քաղաքային համայնքներում

2014թ. փետրվարից Հայկական Կարմիր խաչի ընկերությունն սկսեց իրականացնել «Աղետների Ռիսկի նվազեցումը քաղաքային համայնքներում» ծրագիրը՝ Իրանական Կարմիր Մահիկի ֆինանսավորմամբ և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի աջակցությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է ուժեղացնել ԱԸ կարողությունները՝ քաղաքային համայնքներում դիմակայունության զարգացմանն աջակցելու և աղետների նախապատրաստման և արձագանքման կարողությունների ընդլայնման նպատակով:

Ծրագրի շրջանակներում իրականացվեց «Աղետների ռիսկի նվազեցումը քաղաքային համայնքներում» ուսումնասիրությունը, որտեղ առանցքային ուշադրություն էր տրվել քաղաքային և գյուղական համայնքների միջև տարբերությանը: Այդ նպատակով կազմակերպվեցին բազմաթիվ հանդիպումներ Երևանի փրկարար ծառայության, Տարածքային կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարության փորձագետների, ԱՌՆ Ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ), ՄԱԶԾ, ՄԱ ՄԳՀԳ, Վորլդ Վիժն, ՅՈՒՆԻՍԵՖ, «Լոռե» փրկարար ջոկատի հետ:

Նախ և առաջ, ծրագրի շրջանակներում, ՀԿԽԸ-ն համագործակցություն հաստատեց Տարածքային կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ: Երկու կառույցներն էլ համագործակցելու իրենց պատրաստակամությունը հայտնեցին և ելնելով ծրագրի ուղղվածությունից ու առանձնահատկությունից՝ Երևանի փրկարար ծառայությունը ՏԿ ԱԻ նախարարության կողմից նշանակվեց որպես ծրագրի գործընկեր:

Քաղաքային և գյուղական համայնքների միջև տարբերությունների բացահայտման նպատակով Ստեփանավան քաղաքում կազմակերպվեց երկօրյա աշխատանքային հանդիպում, որին մասնակցեցին ՀԿԽԸ ԱԿ թիմը, «Լոռե» փրկարար ջոկատը և Երևանի փրկարար ծառայության մասնագետներն ու անձնակազմը: Աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվեցին ԱՌՆ տարբերությունները և ռիսկի գնահատման հիմնական բաղադրիչները՝ քաղաքային և գյուղական համայնքների համատեքստում, Երևան քաղաքին բնորոշ հիմնական վտանգները և այլն, որոնք ներառվել էին «ԱՌՆ քաղաքային համայնքներում» զեկույցում: Արդյունքում նշվեցին բազմաթիվ առաջարկներ և մեկնաբանություններ, որոնք ներառվեցին վերջնական զեկույցում:

Ավելին, Երևանի ռիսկի քարտեզը մշակելու նպատակով կազմակերպվեցին բազմաթիվ հանդիպումներ Երևանի փրկարար ծառայության հետ, որի ընթացքում ընդգծվեցին Երևան քաղաքին բնորոշ տարբեր տեսակի վտանգները, իսկ ամբողջական քարտեզը տեղ գտավ զեկույցի վերջնական տարբերակում:

Շարունակելով, ԽԿԳ գործիքի փորձարկումը Երևանի թիրախային համայնքում նախաձեռնելու նպատակով՝ ՀԿԽԸ-ն իր կամավորներին հրավիրեց մասնակցելու մեկօրյա աշխատանքային հանդիպմանը՝ այդ գործընթացի մեկնարկի համար: Հանդիպմանը ներկայացվեցին և քննարկվեցին տարբեր տեսակի հարցաշարերը, բնակիչների հետ հարցազրույցներ իրականացնելու նպատակով վարչական շրջանի բաժանումը, հարցազրույցների իրականացման համար անհրաժեշտ կանոնները և էթիկայի նորմերը: Արդյունքում, հարցազրույցներն իրականացնելու

## Urban DRR project

Starting from February 2014, Armenian Red Cross Society has started implementation of Urban Disaster Risk Reduction Project financed by the Iranian Red Crescent Society and supported by the International Federation of Red Cross and Red Crescent Societies. The objective of the Project is to strengthen National Societies' capacity to support resilience building and enhancing disaster preparedness and response in urban areas.

Within the framework of the Project, a large study on "Disaster Risk Reduction in Urban Communities" with key focus on differences between rural and urban communities has been conducted. For the purposes of this study various meetings with experts from Yerevan Rescue Service, relevant experts from the Ministry of Emergency situations, DRR National Platform, UNDP, UN OCHA, World Vision, UNICEF, "Lore" Rescue Team NGO etc. have been organized.

First, within the framework of the Project, ARCS has established cooperation with the Ministry of Territorial Administration and Emergency Situations (MTAES) and Yerevan Municipality. Both structures have indicated their readiness for cooperation and based on the nature and peculiarities of the Project, Yerevan Rescue Service was appointed as a focal point on behalf of the MES.

# ՀՀ-ՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային միավորման ներկայացուցչությունն իրականացնում է պետական և ոչ պետական սոցիալական օժանդակության սանդղակից դուրս մնացած և սակավ օժանդակություն ստացող կարիքավոր անձանց սոցիալական կարիքների գնահատում և հասցեավորված օժանդակության ցուցաբերում ՀՀ-ում

# ACTIVITIES OF GERMAN RED CROSS BADEN-WURTTEMBERG PROVINCIAL BRANCH SUBSIDIARY IN ARMENIA

**The representation of Baden-Wurttemberg Provincial Branch of German Red Cross implements social needs assessment and provision of addressed support to people in need receiving little support or left out of governmental and non-governmental social support in RA**

## ՀՀ-ում Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության գործունեությունը

Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության ներկայացուցչությունն իրականացնում է պետական և ոչ պետական սոցիալական օժանդակության սանդղակից դուրս մնացած և սակավ օժանդակություն ստացող կարիքավոր անձանց սոցիալական կարիքների գնահատում և հասցեավորված օժանդակության ցուցաբերում ՀՀ-ում:
2014 թվականի հոկտեմբերի 1-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում վերսկսվեց «Գթության խոհանոց» ծրագիրը և հոկտեմբերի 22-ին մեծ բարերար, Հայաստանում «Գթության խոհանոց» ծրագրի ղեկավար, քահանա Կառլ-Հայնց Շայդեի գլխավորությամբ տեղի ունեցավ ծրագրի 21-րդ շրջանի պաշտոնական բացումը: Ծրագրի շահառուներն են Երևանի Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն, Էրեբունի և Կենտրոն վարչական շրջանների սոցիալական ծառայությունների կողմից ընտրված շուրջ 400 սոցիալապես առավել անապահով միայնակ թոշակառուներ, հաշմանդամներ, ծնողազուրկ երեխաներ, որոնք օրական մեկ անգամ ստանում են տաք, բարձր կալորիականությամբ սնունդ: Տարվա ընթացքում տոնական օրերին ծրագրի շահառուների համար կազմակերպվել են միջոցառումներ, որոնք ուղեկցվել են երգով, պարով, ասմունքով: Շահառուներին տարին մեկ անգամ բաշխվում է հագուստ: Ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի Շվեբիշ-Գմյունդ քաղաքի Գթության խոհանոցի ընկերական շրջանի կողմից հանգանակված գումարներով: Ծրագրին աջակցում են Երևանի քաղաքապետարանը, Հայաստանում Գերմանիայի դեսպանատունը, Երևանի Քանաքեռ-Զեյթուն, Էրեբունի, Կենտրոն վարչական շրջանները և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

### Տնային խնամք

«Տնային խնամք» ենթածրագրում ընդգրկված է «Գթության խոհանոց» ծրագրի շուրջ 45 շահառու, ովքեր անկողնային հիվանդ կամ հաշմանդամ են և չեն կարողանում ինքնուրույն հոգալ առօրյա կարիքները: Այցելու քույրերի և կամավորների օգնությամբ վերջիններս ստանում են իրենց հասանելիք սնունդը, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական և բժշկական օգնություն:

### Մանկական սնունդ

«Մանկական սնունդ» ենթածրագրի շահառուներն են բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, բարձր ռիսկային խմբի երեխաները, փողոցի, մուրացիկ, սոցիալապես խիստ անապահով երեխաները, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները, հաշմանդամ՝ մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող երեխաները, վարքի դժվարություններ ունեցող երեխաները, ինչպես նաև սահմանամերձ շրջանների խոցելի խմբի երեխաները՝ ընդհանուր՝ թվով 270 հոգի: Ծրագրի շահառու կազմակերպություններն են՝ ք. Գյումրու «Համայնքային զարգացման և աջակցության կենտրոնը», ք. Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ԲՀԿ-ն, Լոռու մարզի ք. Վանաձորի «Խաչվող ուղիներ» ՀԿ-ն, ք. Երևան «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնը, ք. Թալինի «Քաղաքային մշակութային կենտրոնը», ք. Բերդի «Սոսե մայրերի ասոցիացիան», Ոսկեվան, Լեռնագոգ և Քարակերտ համայնքները:

## Activities of Baden-Wurttemberg provincial branch of German Red Cross in RA

The representation of Baden-Wurttemberg Provincial Branch of German Red Cross implements social needs assessment and provision of addressed support to people in need receiving little support or left out of governmental and non-governmental social support in RA.
On 1 October, 2014, in Qanaqer-Zeytun community restarted “Soup Kitchen” program and on 22 October the 21th session of the Soup Kitchen program was officially opened under the supervision of the great benefactor, head of “Soup Kitchen” program, priest Karl-Heinz Schiede. The beneficiaries of the project were 400 socially most vulnerable lonely elderly, disabled people and orphans, selected by social services of Arabkir, Qanaqer-Zeytun, Erebuni and Kentron communities of Yerevan, who received hot and high calorie food once a day. During the year on holidays events were organized for the beneficiaries, which were accompanied by singing, dancing and recitation. The beneficiaries are also provided with clothes once a year. The program was implemented with financial support of “Soup Kitchen” friend circle in Schwaebisch-Gmuend town of Germany. The program was also supported by the Municipality of Yerevan, German Embassy in Armenia, Community Municipal offices of Qanaqer-Zeytun, Erebuni and Kentron Communities, the Ministry of Labor and Social Affairs of RA.

### Home Care

“Home Care” mini-project included 45 beneficiaries of “Soup Kitchen” program, who are bed-ridden or handicapped and are not able to meet their daily needs themselves. The beneficiaries received their food, as well as psychosocial and medical support by visiting sisters, volunteers and a physician.

### “Child Food” mini-project

Beneficiaries of “Child Food” mini-project are children from large and socially needy families, children from high risk group, street, handicapped children, half-orphans, beggars, children with mental and physical disabilities, children with behavior problems and children from vulnerable groups of border line communities, the total number of persons 270. Beneficiary organizations of the program are “Community Developmenat and Support” Center in Gyumri, “Fill Life” charity NGO in Stepanavan, “Crossing Roads” NGO in Vanadzor of Lori region, “Salvation” center of handicapped children and youth in Yerevan, “Municipal Cultural Center” in Talin, “Sose mothers՝ association” in Berd, Voskevan, Lernagog and Qarakert Communities.



# 2014թ. ՀԿԽԸ կողմից իրականացված ծրագրեր / Programs implemented by ARCS in 2014

| Իրականացնող ուղղությունը/Ծրագրի անվանումը<br>Direction/Program | Նպատակը<br>Goal | Նվիրատուն<br>Donor | Սկիզբը<br>Beginning | Ավարտը<br>End | Իրականացման վայրը<br>Location | Շահառուները<br>Beneficiaries | Բյուջեն<br>Budjet |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Սոցիալական բաժին /Social Department** | | | | | | | |
| «Հայաստանում նացիոնալ սոցիալիզմի նախկին զոհերի և կարիքավոր տարեց մարդկանց սոցիալ-բժշկական խնամքի» ծրագիր<br>“Psychosocial support to the victims of National Socialism in Armenia and social - medical care for needy elderly people” project | Նվազեցնել նացիոնալ սոցիալիզմի նախկին զոհերի և կարիքավոր տարեցների խոցելիությունը<br>To reduce the vulnerability of the Victims of National Socialism and needy elderly people | Գերմանական Կ/Խ Բադեն -Վյուրտեմբերգի երկրամասային միավորում և «Հիշողություն, պատասխանատվություն, ապագա» հիմնադրամ<br>The Baden Wurttemberg Provincial Branch of German Red Cross and “Memory, Responsibility, Future” German Foundation | 01.06.2012 | 31.07.14 | ՀՀ<br>RA | Հայաստանում նացիոնալ սոցիալիզմի նախկին զոհեր և կարիքավոր տարեց մարդիկ<br>Victims of National Socialism in Armenia and needy elderly people | 52 642<br>Եվրո<br>EUR |
| «Գթություն»<br>“Charity” | Սատարել և օժանդակել ծայրահեղ ծանր վիճակում գտնվող միայնակ անժառանգ ծերերին<br>To assist and support lonely elderly people living in extremely bad conditions. | Դենո Գոլդ Մայնինգ քոմփանի<br>Deno Gold Mining Company | 01.05.2012 | 01.05.2013 | Սյունիքի մարզ, քաղաք Կապան<br>Kapan city, Syunik region | Ծայրահեղ ծանր վիճակում գտնվող միայնակ անժառանգ ծերեր<br>Lonely elderly people living in extremely bad conditions | 2 640 000 ՀՀ դրամ<br>AMD |
| **Առողջապահական բաժին /Health Department** | | | | | | | |
| Կանգնեցնել բազմադեղորայքակայուն տուբերկուլոզը<br>Stop multidrug resistant Tuberculosis | Նվազեցնել հիվանդների խոցելիությունը ԲԴԿ ՏԲ նկատմամբ<br>To decrease the vulnerability of patients towards MDR TB | Էլայ Լիլի և Կոմպանիա<br>Eli Lilly and Company | 01.11.2013 | 30.10.2014 | Երևան<br>Yerevan | Բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներ, որոնք գտնվում են բուժման պահպանողական փուլում<br>Multi drug resistant tuberculosis patients in the continuation phase of treatment | 24230<br>Շվ. ֆ. CHF |
| Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում<br>Social support to TB patients | Բարձրացնել բուժման նկատմամբ ՏԲ հիվանդների հետևողականությունը սոց աշխատողների կողմից նրանց և նրանց ընտանիքի անդամների լուսաբանմամբ, տեղեկատվական նյութերի տարածմամբ և սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրմամբ:<br>To raise TB patients adherence towards treatment though dissemination, distribution of imformative materials to TB patients and their family members and through providing psychosocial support by social workers | Գլոբալ հիմնադրամ<br>Global Fund | 01.04.2013 | 30.09.2014 | ՀՀ<br>RA | Ռեգուլյար և ԲԴԿ ՏԲ հիվանդներ<br>Regular and MDR TB patients | 434093480<br>ՀՀ դրամ<br>AMD |
| Միավի կանխարգելումը Հայաստանում<br>HIV prevention in Armenia | Նվազեցնել 15-23 տարեկան երիտասարդների/ ուսանողների խոցելիությունը ՄԻԱՎ-ի նկատմամբ:<br>To reduce the vulnerability among youth aged 15-23/ students to HIV | Ամերիկյան Կարմիր խաչ<br>American Red Cross | 01.07.2014 | 31.06.2015 | ՀՀ<br>RA | 15-23 տարեկան երիտասարդներ | 45000<br>ԱՄՆ դոլար USD |
| ՀՀ Լոռու մարզու ՆԹՕ շրջանում վնասի նվազեցում<br>HIV Prevention among IDUS in Lori Marz | Նվազեցնել ներերակային թմրամիջոցներ օգտագործողների խոցելիությունը ՄԻԱՎ-ի նկատմամբ:<br>To reduce the vulnerability of IDUs towards HIV | Գլոբալ հիմնադրամ<br>Global Fund | 01.10.2013 | 30.09.2014 | ՀՀ, Լոռու մարզ,<br>RA, Lori region, | Ներերակային թմրամիջոցներ օգտագործողներ<br>Intravenous drug users | 43888<br>Եվրո EUR |
| **Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժին /Disaster Management and Population Movement Department** | | | | | | | |
| «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում»<br>“Building Resilient Local Communities in Georgia and Armenia” | Բարձրացնել Հայաստանի թիրախային խոցելի համայնքների դիմակայունությունը Հայկական Կարմիր Խաչի ընկերության «Աղետների ռիսկի նվազեցման համայնքային մոդել»-ի թարմացման, վերահրատարակման և տարածման միջոցով:<br>To increase resilience of targeted vulnerable communities in Armenia through consolidation, replication and expansion of the Community Based Disaster Risk Reduction model of Armenian Red Cross Society | Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչություն, Դանիական, Ավստրիական և Իսլանդական Կխ, Կխ/ԿՄ ՄՖ-ի հետ համագործակցությամբ<br>The European Commission’s Humanitarian aid and Civil Protection Directorate General, Danish, Austrian and Icelandic Red Cross, in a consortium with the IFRC | 01.05.2014 | 30.09.2015 | ՀՀ Շիրակի մարզ<br>RA Shirak region | ՀՀ Շիրակի մարզի 18 ռիսկային համայնքներ և Գյումրիի, Արթիկի և գյուղական համայնքների 86 դպրոցներ<br>18 rural risky communities of Shirak region and 86 schools of Gyumri, Artik and targeted rural communities | 437.676<br>Եվրո EUR |
| ԱՌՆ քաղաքային համայնքներում<br>‘Urban DRR’’ | Հզորացնել Հայկական Կարմիր խաչի կարողությունները քաղաքային համայնքներում դիմակայուն կառուցմանն և աղետների նախապատրաստման ու արձագանքման ընդլայնմանը աջակցելու նպատակով՝ քաղաքային համայնքներում գյուղական համայնքների համար մշակված ԿԽԿՄ ՄՖ ԱՌՆ գլոբալ գործիքների տեղայնացման և փորձարկման միջոցով:<br>To strengthen Armenian Red Cross capacity to support resilience building and enhancing disaster preparedness and response in urban areas through testing and adapting to urban context IFRC global DRR tools developed for rural context. | Իրանական Կարմիր մահիկ և Կխ/ԿՄ ՄՖ<br>Iranian Red Crescent and IFRC | 01.02.2014 | 31.10.2014 | Երևան<br>Yerevan | Երևանի Աջափնյակ վարչական շրջան, ԱՌՆ գործընկերներ<br>3 schools of Yerevan | 56.000<br>Շվեց. Ֆրանկ CHF |
| Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ<br>“Building Safer and Resilience Communities” | Նվազեցնել Հայաստանում գյուղական և քաղաքային համայնքների բնակչության խոցելիությունը աղետների նկատմամբ:<br>To contribute towards reducing vulnerability to disasters of rural and urban population in Armenia. | Ավստրիական զարգացման գործակալություն և Ավստրիական Կարմիր խաչի ընկերություն<br>Austrian Development Agency and Austrian Red Cross Society | 01.12.2012 | 31.12.2015 | ՀՀ Լոռու մարզ, Երևան, Վանաձոր և Ստեփանավան քաղաքները, 4 գյուղական համայնքներ՝ Դարպաս, Վահագնի, Կուրթան, Կողես<br>RA Lori region, Yerevan, Vanadzor and Stepanavan cities, 4 rural communities Darpas, Vahagni, Kurtan, Koghes | ՀՀ Լոռու մարզի, Երևան, Վանաձոր և Ստեփանավան քաղաքների բնակչությունը<br>Population of Lori region, Yerevan, Vanadzor and Stepanavan cities | 283.500<br>Եվրո EUR |
| Կլիմայի արևելյան հարթակ<br>Climate Forum East | Նպաստել կլիմայի փոփոխության ոլորտի քաղաքականության մշակման գործընթացին, Արևելյան Գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության զարգացմանը, ինչպես նաև զարգացնել Արևելյան Գործընկերության քաղաքական գերակայությունները բնապահպանության կառավարման և կլիմայի փոփոխության ոլորտներում:<br>To contribute to global policy making processes on Climate Change, to Civil Society development in Eastern Parntership (EaP) countries, to advancing EaP political priorities in the area of environment governance and climate change. | Եվրամիություն, Ավստրիական զարգացման գործակալություն, Ավստրիական Կարմիր խաչի և Բնության համաշխարհային հիմնադրամ:<br>The European Union, Austrian Development Agency, the Austrian Red Cross and World Wide Fund for Nature. | 01.01.2013 | 31.12.2014 | ՀՀ<br>RA | Քաղաքացիական հասարակություն, ՔՀԿ, տեղական և ազգային իշխանություններ<br>Civil society, CSOs, local and national authorities | 82,300 Եվրո EUR |
| Լուսառատ համայնքի դպրոցի վերանորոգում<br>Renovation of the School in Lusarat Village | Նվազեցնել Արարատի մարզի Լուսառատ համայնքի սոցիալական խոցելիությունը և հզորացնել դպրոցի կարողությունները:<br>Reduce social vulnerability and strengthen the capacity of the school of Lusarat community in Ararat region | Ճապոնիայի դեսպանատունը Հայաստանում<br>The Embassy of Japan in the Republic of Armenia | 24.10.2013 | 24.10.2014 | ՀՀ Արարատի մարզ<br>Ararat region of RA | Արարատի մարզի, Լուսառատ համայնքի բնակիչներ, մասնավորապես դպրոցահասակ երեխաներ<br>Population of Lusarat community in Ararat region, particularly pupils | 92.061<br>ԱՄՆ դոլլար USD |
| Եղանակային ծայրահեղ պայմաններ<br>Extreme Winter Conditions | Աջակցություն սիրիահայերին՝ դիմակայելու ցուրտ ձմռանը:<br>To support Syrian Armenians to withstand extreme winter | Կխ/ԿՄ ՄՖ Արտակարգ իրավիճակներին արձագանքման հիմնադրամ<br>IFRC DREF | 30.01.2014 | 31.03.2014 | ՀՀ<br>RA | 250 սիրիահայ ընտանիք<br>250 Syrian Armenian families | 126.477,5<br>Շվեց. Ֆրանկ CHF |
| Օգնություն Արմավիրի մարզի կարկուտից տուժած բնակչությանը և միջանկյալ ֆինանսավորում «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի համար<br>Emergency assistance for affected population after hail storm and Bridge Funding for Building Safer Local Communities in South Caucasus | Ամենատուժած համայնքների բնակչությանը (2,700 մարդ / 1085 ընտանիք) տրամադրել առաջին անհրաժեշտության պարագաներ)՝ հաղթահարելու համար կարկուտի հետևանքները ձմռան ընթացքում:<br>The most affected population (2700 people / 1085 households) are provided with basic non-food items to help them cope with the consequences of the hail storm over winter period. | Դանիական Կարմիր խաչի ընկերություն<br>Danish Red Cross Society | 01.11.2013 | 30.04.2014 | ՀՀ Շիրակի և Արմավիրի մարզ<br>RA Shirak and Armavir regions | ՀՀ Շիրակի մարզի 14 ռիսկային գյուղական համայնքներ և Արմավիրի մարզի կարկուտից տուժած 15 գյուղական համայնքներ<br>14 rural risky communities of Shirak region and 15 rural communities affected by hailstorm of Armavir region | 67.952<br>Եվրո EUR |
| Աջակցություն սիրիահայերին<br>Relief and Empowerment of Syrian Armenians | Նպաստել Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի կենսապայմանների բարելավմանը:<br>To contribute to enhanced livelihood conditions of Syrian Armenians in Armenia. | Ավստրիական զարգացման գործակալություն և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունը Austrian Development Agency and Austrian Red Cross Society | 01.10.2013 | 31.07.2014 | ՀՀ<br>RA | 300 սիրիահայ ընտանիք<br>300 Syrian Armenian families | 277.590<br>Եվրո EUR |
| Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում II<br>Relief and Empowerment of Syrian Armenians II | Նպաստել Հայաստանում փախստականների ապրելակերպի բարելավմանը և նրանց սոցիալական ինտեգրմանը:<br>To contribute to enhanced living conditions and social inclusion of refugees in Armenia. | Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունը<br>Austrian, German and French Red Cross Societyies | 01.05.2014 | 31.12.2014 | ՀՀ<br>RA | 150 սիրիահայ ընտանիք<br>150 Syrian Armenian families | 140.000<br>Եվրո EUR |
| Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում III<br>Relief and Empowerment of Syrian Armenians III | Նպաստել Հայաստանում Սիրիայից ժամանած փախստականների կենսապայմանների բարելավմանը:<br>To contribute to enhanced living conditions of Syrian refugees in Armenia. | Ավստրիական զարգացման գործակալություն և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունը<br>Austrian Development Agency and Austrian Red Cross Society | 01.11.2014 | 30.06.2015 | ՀՀ<br>RA | 300 սիրիահայ ընտանիք<br>300 Syrian Armenian families | 262.360<br>Եվրո EUR |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ականներից և պատերազմի այլ պայթուցիկ մնացորդներից տուժածների և նրանց կարիքների վերաբերյալ տվյալների հավաքագրումը Հայաստանում<br>Mines and Explosive Remnants of War Victims Casualty and Needs Data Collection in Armenia | Հավաքագրել, կենտրոնացնել և վերլուծել ականներից տուժածների տվյալները և կարիքները և հասանելի դարձնել շահագրգիռ կողմերին:<br>To collect, centralize and analyze mine casualty data and victims needs and make it available for stakeholders. | Կարմիր խաչի միջազգային կոմիտե:<br>The International Committee of the Red Cross. | 01.01.2014 | 31.12.2014 | ՀՀ<br>RA | 400 ականներից տուժածներ և նրանց ընտանիքի անդամներ<br>400 mine victims and their family members | 2 083 404<br>ՀՀ դրամ AMD |
| Փախստականների ընդունում և ինտեգրում<br>Refugee reception and integration | 1. Բարելավել ապաստան հայցողների ընդունելության պայմանները<br>2. Հզորացնել փախստականներով բնակեցված համայնքերը, նպաստել ինքնաբավության կայացմանը և տեղական ինտեգրմանը<br>3. Սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների կանխարգելում և արձագանք<br>• To improve reception conditions for asylum-seekers;<br>• To increase community empowerment, contribute to achievement of self-reliance and local integration;<br>• Prevention of and response to SGBV. | ՄԱԿ ՓԳՀ / UNHCR | 01.01.2014 | 31.12.2014 | ՀՀ<br>RA | Փախստականներ Ադրբեջանից<br>Փախստականներ Իրաքից<br>Փախստականներ կամ փախստականի կարգավիճակին հավասարեցված Սիրիայից տեղահանված անձինք<br>Այլ<br>Refugees from Azerbaijan Refugees from Iraq<br>Refugees and persons in a refugee like situation displaced from Syria<br>Others | 49752766 ՀՀ դրամ / AMD |
| Սիրիացի փախստականների և ապաստան հայցողների ինտեգրման խթանում<br>Promoting Integration of Syrian Refugees and Asylum seekers | Նպաստել ինքնաբավության կայացմանը և տեղական ինտեգրմանը | ՄԱԿ ՓԳՀ / UNHCR | 07.07.2014 | 31.12.2014 | ՀՀ<br>RA | Փախստականներ կամ փախստականի կարգավիճակին հավասարեցված Սիրիայից տեղահանված անձինք<br>Refugees and persons in a refugee like situation displaced from Syria | 19320000 ՀՀ դրամ / AMD |
| **Առաջին օգնության բաժին /First Aid Department** | | | | | | | |
| Առաջին օգնության դասընթացներ ՀՀ հեռավոր համայնքների բնակիչների համար<br>Firs aid courses for RA remote communities | Նվազեցնել հեռավոր համայնքների բնակչության խոցելիությունը տարբեր աղետների և դժբախտ պատահարների նկատմամբ<br>To reduce the vulnerability of population of remote communities to disasters and accidents | ԳԿԽ և Բադեն-Վյուրտեմբերգ հիմնադրամ<br>GRC and Baden-Wurttemberg Stiftung | Հունվար<br>January | Դեկտեմբեր<br>December | Երևան, Արագածոտնի, Տավուշի, Սյունիքի, Արմավիրի, Շիրակի, Վայոց ձորի, Լոռու և Գեղարքունիքի մարզեր<br>Yerevan, Aragatsotn, Syunik, Armavir, Shirak, VayotsDzor, Lori and Gegharkunik marzes | Հեռավոր համայնքների բնակիչներ<br>Population of remote communities | 7 534 600<br>ՀՀ դրամ AMD |
| Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար<br>Firs aid courses for RA border communities | Նվազեցնել սահմանամերձ բնակչության խոցելիությունը տարբեր աղետների և դժբախտ պատահարների նկատմամբ<br>To reduce the vulnerability of population of border communities to disasters and accidents | ԿԽՄԿ<br>ICRC | 01.08.2014 | 30.09.2014 | Տավուշի և Սյունիքի մարզեր<br>Tavush and Syunik marzes | Սահմանամերձհամայնքների բնակիչներ<br>Population of border communities | 1 750 800<br>ՀՀ դրամ<br>AMD |
| ԱՕ հրահանգիչների նախապատրաստման դասընթաց<br>Training of FA Instructors | Նախապատրաստել ԱՕ հրահանգիչների ՀԿԽԸ ԱՕ դասընթացները վարելու համար<br>To train FA instructors for conducting FA training courses of ARCS | ԿԽՄԿ<br>ICRC | 24.04.2013 | 27.04.2014 | Դիլիջան<br>Dilijan | ՀՀ բնակչություն<br>Population of Armenia | 782 000<br>ՀՀ դրամ AMD |
| Առաջին օգնության դասընթացներ<br>First Aid Training courses | Նվազեցնել բնակչության խոցելիությունը տարբեր աղետների և դժբախտ պատահարների նկատմամբ<br>To reduce the vulnerability of population to disasters and accidents | Վորլդ Վիժն, «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ<br>Արարատ կոնյակի գործարան և այլ կազմակերպություններ<br>World Vision,"GEOTEAM" CJSC, Ararat brandy factory and other organizations | 01.01.2014 | 31.12.2014 | Երևան, Շիրակի, Սյունիքի, Արագածոտնի և Տավուշի մարզեր<br>Yerevan, Shirak, Syunik, Aragatsotn and Tavush marzez | Կազմակեր-պությունների աշխատակից-ներ<br>Staff of organizations | 5 974 550<br>ՀՀ դրամ<br>AMD |
| ԱՕ կամավորական խմբերի ռեգիոնալ մրցումներ<br>Regional competitions of FA Volunteer groups | Նախապատրաստել ԱՕ խբմեր<br>To prepare FA teams | ԿԽՄԿ<br>ICRC | 01.06.2014 | 30.10.2014 | Երևան, Արագածոտնի, Տավուշի, Վայոց ձորի, Լոռու և Գեղարքունիքի մարզեր<br>Yerevan, Aragatsotn, Tavush, Vayots Dzor, Lori and Gegharkunik marzes | ՀԿԽԸ կամավորներ<br>ARCS volunteers | 735 000<br>ՀՀ դրամ<br>AMD |
| **Որոնման բաժին /Tracing Department** | | | | | | | |
| Որոնում ծառայություն<br>Tracing Service | Կազմալուծված ընտանիքների վերամիավորում, պատերազմների, հակամարտությունների և աղետների հետևանքով անհայտ կորածների որոնում<br>Tracing of the missing and restoration of the family link lost through wars, conflict and disaster | ԿԽՄԿ<br>ICRC | 01.01.2014 | 31.12.2014 | ՀՀ Տարածք<br>RA territory | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 1,554,175 ՀՀ դրամ<br>AMD |
| Կենսաբանական նմուշներ և այլ անձնական տվյալներ հավաքելու և վարելու պիլոտային ծրագիր<br>Pilot Project of the Collection and Management of Biological Reference Samples and other Personal Data | Ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքներից<br>Families of missing persons in relation to the Nagorno-Karbakh conflict | ԿԽՄԿ<br>ICRC | 25.06.2014 | 01.11.2014 | ՀՀ Տարածք<br>RA territory | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 378,000<br>ՀՀ դրամ<br>AMD |
| Սատարում Անհայտ կորածների ընտանիքներին<br>Accompanying Families of Missing Persons | ԱԿԸ սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում<br>Giving socio-psychological support to families of missing persosn | ԿԽՄԿ<br>ICRC | 01.01.2014 | 31.12.2014 | ՀՀ Տարածք<br>RA territory | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 9,989,157<br>ՀՀ դրամ<br>AMD |
| **Երիտասարդական բաժին /Youth Department** | | | | | | | |
| Սոցիալ-հոգեբանական աջակցություն փախստական ծերերին և երեխաներին<br>Psycho-Social support to elderly refugees and children | Բարելավել հանրակացարանաբնակ 70 ծերերի և 70 երեխաների սոցիալական ին տեգրումը և կենսամակարդակը:<br>The program goal is to improve social inclusion and living conditions of 70 elderly people and 70 children living in dormitories. | Ավստրիական Կարմիր խաչ<br>Austrian Red Cross | 01.02.2012 | 31.03.2014 | Երևան<br>Yerevan | Հանրակացարանաբնակ 70 ծերեր և 70 երեխաներ<br>70 elderly people and 70 children from refugee and poor families living in dormitories | 150000<br>Եվրո EUR |
| ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում<br>HIV Prevention in Armenia | ՄԻԱՎ-ի արդյունավետ հակազդում՝ բնակչության առավել խոցելի խմբերի (թմրամիջոցների ներարկային օգտագործողների) շրջանում, և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց բուժման, խնամքի ու աջակցության խթանմանը՝ քարոզչության միջոցով<br>Advancing the impact of effective HIV prevention among vulnerable and high-risk groups (e.g. injection drug users (IDUs)) and advocating people living with HIV (PLHIV) and IDUs to HIV/AIDS treatment, care and support. | Իտալական Կարմիր խաչ<br>Italian Red Cross | 01.08.2013 | 31.07.2014 | Երևան, Վանաձոր<br>Yerevan Vanadzor | 620 Լրագրողներ, ուսանողներ, ՏԻՄ ներկայացուցչներ, բժիշկներ 120 ԹՆՕ և 150 ՄԻԱՎ-ով ապրողներ<br>620 journalists, students, Local Authorities, doctors<br>120 IDUs, 150 PLHIV | 115000<br>Եվրո EUR |
| «Օգնել. Ես կարող եմ, Դու Կարող ես, Մենք կարող ենք»<br>"Help? I can!, You Can! We Can!" | Գերմանացի և հայ երեխաներին /այդ թվում նաև հատուկ խնամքի կարիք ունեցողներ/ տեղեկացնել հաշմանդամ մարդկանց խնդիրների՝ սոցիալական, կենցաղային և խտրականության վերաբերյալ, ինչպես նրանց ծանոթացնել պատմությանը հայտնի խտրականության դեպքերին<br>To raise the awareness of 30 children (including children with special needs) from Armenia and Germany about the social, psychological and everyday problems of people with disabilities. | «Եվրոպացիները հանուն խաղաղության» հիմնադրամ<br>Europeans for Peace foundation | 25.10.2013 | 22.03.2014 | Երևան Շտուտգարտ<br>Yerevan Stuttgart | 30 Հայ և գերմանացի երեխաներ, կամավորներ<br>30 Armenian and German children, volunteers | 12500<br>Եվրո EURO |
| Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում ծրագիր<br>Syrian-Armenian Children's Resilience programme in Armenia | Խթանել Սիրահայ երեխաների և պատանիների ինտեգրումն ու կայուն զարգացումը Հայաստանում<br>To actively promote the normal development and integration of affected Syrian/Armenian children and youth displaced in Armenia. | Դանիական Կխ<br>Danish RC | 01.08.2014 | 31.07.2015 | Երևան<br>Yerevan | 324 սիրահայ և տեղացի երեխաներ | 18 614 500 ՀՀ դրամ/AMD |
| Շարժական ինտերնետ երեխաների համար<br>Mobile internet for children | Աջակցել Արցախի և Շիրակի հանրակացրանաբնակ երեխաների ինտեգրմանը:<br>To support socially and integrate disadvantaged vulnerable children living in Shirak and Artsakh dormitories. | Օրանժ Արմենիա<br>Orange Armnenia | 01.10.2012 | 31.03.2015 | Երևան<br>Yerevan | Արցախի և Շիրակի հանրակացրանաբնակ 45 փախստական ընտանիքների երեխաներ 45 children from families with refugee background living in Shirak and Artsakh dormitories. | 986 000<br>ՀՀ դրամ AMD |
| Եվրոպական Կամավորական Ծառայություն<br>European Voluntary Service (EVS) | Փորձի և մշակութային ածեքների փոխանակում երիտասարդների միջև<br>Experience and cultural exchange among young people | Եվրամիություն<br>European Union | 01.09.2013 | 31.08.2014 | ՀՀ տարածք<br>RA territory | 2 հայ կամավորներ<br>2 Armenian volunteers | 900<br>Եվրո<br>EUR |
| **Լրատվական և լուսաբանման բաժին /Information and Dissemination department** | | | | | | | |
| «Լուսաբանում»<br>"Dissemination" | Կխ շարժման և հիմնարար սկզբունքների, ՀԿԽԸ պատմության և գործունեության, ՄՄԻ լուսաբանում և Կխ խորհրդանշանի պաշտպանություն<br>Dissemination of RC Movement and Fundamental Principles, ARCS History and activities, IHL and protection of RC emblem | ԿԽՄԿ<br>ICRC | 01.01.2014 | 31.12.2014 | ՀՀ տարածք<br>RA territory | ՀՀ բնակչություն<br>RA population | 14.535.565 ՀՀ դրամ<br>AMD |

## ՀԿԽԸ գործունեությունը թվերով
## ARCS activities in figures

| Եկամուտներ | Հազար ՀՀ դրամ | USD=474,97 |
|---|---|---|
| Եկամուտ ճանաչված շնորհներ | 1217952 | 2564271 |
| Անդամավճարներ | 477 | 1004 |
| Հանգանակություն | 266 | 560 |
| Ծառայություն | 6474 | 13631 |
| Այլ | 15306 | 32225 |
| Ընդամենը | 1 240 475 | 2611691 |
| **Ծախսեր** | **Հազար ՀՀ դրամ** | **USD=474,97** |
| Ծրագրային ծախսեր | 1 217 952 | 2564271 |
| Ծառայութ. մատուցման հետ կապված ծախսեր | 5827 | 12268 |
| Այլ | 27 491 | 57880 |
| Ընդամենը | 1 251 270 | 2634419 |

| Income | In 1000 AMD | USD=474,97 |
|---|---|---|
| Received from grants | 1217952 | 2564271 |
| Membership fees | 477 | 1004 |
| Donation | 266 | 560 |
| Services | 6474 | 13631 |
| Other | 15306 | 32225 |
| Total | 1 240 475 | 2611691 |
| **Expenses** | **In 1000 AMD** | **USD=474,97** |
| Expenses related to the Implementation of projects | 1 217 952 | 2564271 |
| Expenses related to provisional services | 5827 | 12268 |
| Other | 27 491 | 57880 |
| Total | 1 251 270 | 2634419 |

## Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն 31 դեկտեմբերի 2013թ.

«Հայկական Կարմիր խաչի ընկերություն» ՀԿ-ի ղեկավարությանը.
Կից ներկայացվող ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ընդգրկում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ ամփոփ համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, պահուստում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» ՀԿ-ի և վերջինիս դուստր ընկերությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններից: 2014թ. դեկտեմբերի 28-ին մենք արտահայտել ենք դրական կարծիք այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:
Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ընդգրկում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Խմբի աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

**Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար**
Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը**
Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից Աուդիտի Միջազգային Ստանդարտ (ԱՄՍ) 810 «Աուդիտորական եզրակացություն տրամադրելու նպատակով՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրականացվող ընթացակարգեր» ստանդարտի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

**Եզրակացություն**
Մեր կարծիքով, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Խմբի՝ աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Սերգեյ Յակովլև
Աուդիտոր

28 դեկտեմբերի 2014թ.
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

*Այս փաստաթուղթն իրենից ներկայացնում է անգլերեն տարբերակի հայերեն թարգմանությունը: Հայերեն և անգլերեն տարբերակների անհամապատասխանության դեպքում միանշանակորեն գերակայում է անգլերեն տարբերակը:*

## International Financial Reporting Standards Summary Consolidated Financial Statements and Independent Auditor's Report 31 December 2013

To the Management of Armenian Red Cross Society NGO: The accompanying summary consolidated financial statements, which comprise the summary consolidated statement of financial position as at 31 December 2013 and the summary consolidated statements of profit or loss and other comprehensive income, changes in reserve and cash flows for the year then ended are derived from the audited consolidated financial statements of Armenian Red Cross Society NGO and its subsidiaries (the "Group") for the year ended 31 December 2013. We expressed an unmodified audit opinion on those consolidated financial statements in our report dated 28 December 2014.
The summary consolidated financial statements do not contain all the disclosures required by International Financial Reporting Standards. Reading the summary consolidated financial statements, therefore, is not a substitute for reading the audited consolidated financial statements of the Group.

**Management's Responsibility for the Summary Consolidated Financial Statements**
Management is responsible for the preparation of a summary of the audited consolidated financial statements in accordance with International Financial Reporting Standards.

**Auditor's Responsibility**
Our responsibility is to express an opinion on the summary consolidated financial statements based on our procedures, which were conducted in accordance with International Standard on Auditing (ISA) 810, 'Engagements to Report on Summary Financial Statements'.

**Opinion**
In our opinion, the summary consolidated financial statements derived from the audited consolidated financial statements of the Group for the year ended 31 December 2013 are consistent, in all material respects, with those financial statements, in accordance with International Financial Reporting Standards.

Altaf Tapia
Managing Partner

Sergey Yakovlev
Auditor

28 December 2014
Yerevan, Republic of Armenia

| Հազ. ՀՀ դրամ | 31 դեկտեմբերի 2013թ. | 31 դեկտեմբերի 2012թ. |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | |
| Հիմնական միջոցներ | 301,536 | 578,498 |
| Ոչ նյութական ակտիվներ | 1,566 | 659 |
| Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում | 15,593 | 16,331 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 8,837 | 8,837 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | 327,532 | 604,325 |
| **ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Պաշարներ | 158,186 | 162,819 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 27,574 | 20,102 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 321,993 | 124,055 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | 507,753 | 306,976 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | 835,285 | 911,301 |
| **ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՊԱՀՈՒՍՏ** | | |
| Գործունեության ֆինանսավորման պահուստ | 411,118 | 684,538 |
| **Ընդամենը պահուստ** | 411,118 | 684,538 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Ընթացիկ պարտավորություններ | | |
| Վարկեր և փոխառություններ | 4,000 | 22,000 |
| Ստացված դրամաշնորհներ | 376,873 | 175,718 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 43,294 | 29,045 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | 424,167 | 226,763 |
| **Ընդամենը պարտավորություններ** | 424,167 | 226,763 |
| **Ընդամենը պարտավորություններ և պահուստ** | 835,285 | 911,301 |

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2014թ. դեկտեմբերի 26-ին:

Աննա Եղիազարյան
Գլխավոր քարտուղար

Մարիամ Կնյազյան
Գլխավոր հաշվապահ

| In thousands of Armenian Drams | 31 December 2013 | 31 December 2012 |
|---|---|---|
| ASSETS | | |
| Non-current assets | | |
| Property, plant and equipment | 301,536 | 578,498 |
| Intangible assets | 1,566 | 659 |
| Investments in associates | 15,593 | 16,331 |
| Deferred income tax asset | 8,837 | 8,837 |
| Total non-current assets | 327,532 | 604,325 |
| Current assets | | |
| Inventories | 158,186 | 162,819 |
| Trade and other receivables | 27,574 | 20,102 |
| Cash and cash equivalents | 321,993 | 124,055 |
| Total current assets | 507,753 | 306,976 |
| **Total assets** | 835,285 | 911,301 |
| **UNRESTRICTED RESERVE** | | |
| Reserve for funding of operations | 411,118 | 684,538 |
| Total reserve | 411,118 | 684,538 |
| **LIABILITIES** | | |
| Current liabilities | | |
| Loans and borrowings | 4,000 | 22,000 |
| Contributions received in advance | 376,873 | 175,718 |
| Trade and other payables | 43,294 | 29,045 |
| Total current liabilities | 424,167 | 226,763 |
| **Total liabilities** | 424,167 | 226,763 |
| **Total liabilities and reserve** | 835,285 | 911,301 |

Approved for issue and signed on 26 December 2014

Anna Yeghiazaryan
Secretary General

Mariam Knyazyan
Chief Accountant

| Հազ. ՀՀ դրամ | 2013թ. | 2012թ. |
|---|---|---|
| **ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ** | 860,342 | 507,610 |
| Հիվանդանոցային ծառայություններից հասույթ | 212,483 | 204,582 |
| Այլ ծառայություններից եկամուտ | 14,839 | 108,587 |
| Փոխարժեքային տարբերություններից զուտ եկամուտ | 616 | 1,027 |
| **Այլ եկամուտ** | 8,504 | 6,343 |
| Շահառուներին տրամադրված պաշարներ | (493,022) | (316,653) |
| Անձնակազմի ծախսեր | (304,489) | (264,720) |
| Հիմնական միջոցների արժեզրկում | (244,314) | - |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | (73,191) | (53,636) |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | (65,932) | (70,196) |
| Մաշվածություն | (42,872) | (43,778) |
| Օգտագործված պաշարներ | (42,148) | (35,341) |
| Ֆինանսական օգնություն շահառուներին | (40,616) | (16,778) |
| Վերապատրաստման ծախսեր | (19,090) | (4,220) |
| Մասնագիտական ծառայություններ | (10,235) | - |
| Նորոգման և սպասարկման ծախսեր | (10,101) | (8,567) |
| Ասոցացված կազմակերպությունների ֆինանսական արդյունքի բաժին | (738) | 13,019 |
| Պաշարների դուրսգրում | - | (21,730) |
| **Այլ ծախսեր** | (20,264) | (103,712) |
| Գործառնական վնաս | (270,228) | (98,163) |
| Ֆինանսական ծախսեր | (2,591) | (1,876) |
| Վնաս մինչև հարկումը | **(272,819)** | **(100,039)** |
| Շահութահարկի գծով (ծախս) /փոխհատուցում | (601) | 8,120 |
| **Տարվա վնաս** | **(273,420)** | **(91,919)** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | **(273,420)** | **(91,919)** |

| In thousands of Armenian Drams | 2013 | 2012 |
|---|---|---|
| **CONTRIBUTION INCOME** | 860,342 | 507,610 |
| Revenue from hospital services | 212,483 | 204,582 |
| Income from other services | 14,839 | 108,587 |
| Foreign exchange gains less losses | 616 | 1,027 |
| **Other income** | **8,504** | **6,343** |
| Inventory distributed to beneficiaries | (493,022) | (316,653) |
| Staff costs | (304,489) | (264,720) |
| Impairment of property, plant and equipment | (244,314) | - |
| Office and utility expenses | (73,191) | (53,636) |
| Business trip and representative expenses | (65,932) | (70,196) |
| Depreciation | (42,872) | (43,778) |
| Inventory used | (42,148) | (35,341) |
| Financial aid to beneficiaries | (40,616) | (16,778) |
| Training expenses | (19,090) | (4,220) |
| Professional services | (10,235) | - |
| Repair and maintenance expenses | (10,101) | (8,567) |
| Share of results of the associates | (738) | 13,019 |
| Write-off of inventory | - | (21,730) |
| **Other expenses** | **(20,264)** | **(103,712)** |
| Operating loss | (270,228) | (98,163) |
| Finance costs | (2,591) | (1,876) |
| Loss before income tax | (272,819) | (100,039) |
| Income tax (expense)/credit | (601) | 8,120 |
| **loss for the year** | **(273,420)** | **(91,919)** |
| **TOTAL COMPREHENSIVE LOSS FOR THE YEAR** | **(273,420)** | **(91,919)** |

| Հազ. ՀՀ դրամ | Գործունեության ֆինանսավորման պահուստ | Ընդամենը |
|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. | 776,457 | 776,457 |
| Ընդամենը 2012թ. համապարփակ ֆինանսական արդյունք | (91,919) | (91,919) |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ. | 684,538 | 684,538 |
| Ընդամենը 2013թ. համապարփակ ֆինանսական արդյունք | (273,420) | (273,420) |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ. | 411,118 | 411,118 |

| Հազ. ՀՀ դրամ | 2013թ. | 2012թ. |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Ստացված դրամաշնորհներ | 1,061,497 | 638,079 |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ | 228,899 | 309,208 |
| Մատակարարներին վճարված դրամական միջոցներ | (726,461) | (581,600) |
| Անձնակազմին վճարված դրամական միջոցներ | (246,992) | (197,480) |
| Շահութահարկից բացի այլ վճարված հարկեր | (90,713) | (69,364) |
| Վճարված շահութահարկ | (1,108) | (1,030) |
| Վճարված տոկոսներ | (3,403) | (2,419) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **221,719** | **95,394** |

| In thousands of Armenian Drams | Reserve for funding of operations | Total |
|---|---|---|
| Balance at 1 January 2012 | 776,457 | 776,457 |
| Total comprehensive loss for 2012 | (91,919) | (91,919) |
| Balance at 31 December 2012 | 684,538 | 684,538 |
| Total comprehensive loss for 2013 | (273,420) | (273,420) |
| Balance at 31 December 2013 | 411,118 | 411,118 |

| In thousands of Armenian Drams | 2013 | 2012 |
|---|---|---|
| **Cash flows from operating activities** | | |
| Contributions received | 1,061,497 | 638,079 |
| Cash received from customers | 228,899 | 309,208 |
| Cash paid to suppliers | (726,461) | (581,600) |
| Cash paid to staff | (246,992) | (197,480) |
| Taxes other than on income paid | (90,713) | (69,364) |
| Income tax paid | (1,108) | (1,030) |
| Interest paid | (3,403) | (2,419) |
| **Net cash from operating activities** | **221,719** | **95,394** |

| Հազ. ՀՀ դրամ | 2013թ. | 2012թ. |
|---|---|---|
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (9,571) | (65) |
| Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր | (9,571) | (65) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Տրամադրված փոխառություններ | - | (240) |
| Տրամադրված փոխառությունների մարում | 446 | - |
| Հոսքեր փոխառություններից | 37,000 | 65,556 |
| Փոխառությունների մարում | (53,000) | (53,797) |
| Ֆինանսական (գործունեությամբ օգտագործված)/ գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (15,554) | 11,519 |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 1,344 | 697 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին | 124,055 | 16,510 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին | 321,993 | 124,055 |

| In thousands of Armenian Drams | 2013 | 2012 |
|---|---|---|
| **Cash flows from investing activities** | | |
| Purchase of property, plant and equipment | (9,571) | (65) |
| Net cash used in investing activities | (9,571) | (65) |
| Cash flows from financing activities | | |
| Borrowings provided | - | (240) |
| Repayment of borrowings provided | 446 | - |
| Proceeds from borrowings | 37,000 | 65,556 |
| Repayment of borrowings | (53,000) | (53,797) |
| Net cash (used in)/from financing activities | (15,554) | 11,519 |
| Effect of exchange rate changes on cash and cash equivalents | 1,344 | 697 |
| Cash and cash equivalents at the beginning of the year | 124,055 | 16,510 |
| Cash and cash equivalents at the end of the year | 321,993 | 124,055 |

## ՀԿԽԸ գործընկերները
## ARCS Partners

ICRC

Տպագրված է ԿԽՄԿ աջակցությամբ
Printed with the support of ICRC

Երևան 2015 Yerevan

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
ՀՀ, Երևան, 0015, Պարոնյան 21/1
Հեռ.՝ +374 60 625050, ֆաքս՝ +374 60 62 50 72
www.redcross.am, էլ.փոստ՝ redcross@redcross.am
https://www.facebook.com/ ArmenianRedCrossSociety
https://twitter.com/RedCrossArmenia

Armenian Red Cross Society
21/1 Paronyan str., Yerevan, Armenia, 0015
Phone: +374 60 625050, fax: +374 60 62 50 72
www.redcross.am, e-mail: redcross@redcross.am
https://www.facebook.com/ ArmenianRedCrossSociety
https://twitter.com/RedCrossArmenia